

# ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

34-րդ ՍԱՐԻ, 2015, ԹԻԻ 8-9 (398-399) VOL. XXXIV N° 8-9 السنة الرابعة والثلاثون - العدد رقم 8-9



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՀԱՆԴՒՊՈՒՄՆԵՐԸ

Հայ հոգեւոր պետերուն տրուած այցելութիւններէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նստավայրի անդամները շարունակեցին իրենց ծանօթացման հանդիպումները եւ յաջորդաբար տեսակցութիւններ ունեցան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Աշոտ Քոչարեանի եւ պետական երեսփոխան եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունիի հետ:

Թիւն յայտնեց օժանդակելու Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր աշխատանքներուն՝ յաջողութիւն մաղթելով նորընտիր Կեդրոնական Վարչութեան քառամեայ ծրագիրներուն:

## ԴԵՍՊԱՆ ԱՇՈՏ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՄՕՏ

Երկու օր ետք, Երկուշաբթի, 25 Յունուար 2016-ին, Կեդրոնական վարչութեան եղբայրները այցելեցին Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Աշոտ Քոչարեանին՝ փոխադարձ ծանօթացման համար:



Հանդիպման ընթացքին շեշտը դրուեցաւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան անհրաժեշտութեան վրայ, ինչպէս նաեւ ներկայացուեցան Կեդրոնական Վարչութեան քառամեայ ծրագիրները, որոնց մեծամասնութիւնը կեդրոնացած պիտի ըլլայ Հայաստանի մէջ՝ սփիւռքահայ պատանին ու երիտասարդը հայրենիքին ծանօթացնելու նպատակով:

## ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ՄՕՏ

Նոյն օրը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը այցելեց նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիին, փոխադարձ ծանօթացման եւ Հ.Մ.Ը.Մ.Ի առնչուող ծրագիրներու քննարկման համար:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՍՍ. ՓԱՆՈՍԵԱՆԻ ՄՕՏ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նստավայրի անդամները Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանին այցելեցին Շաբաթ, 23 Յունուար 2016-ին:



Այցելութեան ընթացքին ներկայացուեցաւ նորընտիր Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նոր կազմը եւ անդրադարձ կատարուեցաւ յառաջիկայ քառամեակի ծրագիրներու մանրամասնութիւններուն: Շեշտը դրուեցաւ նաեւ հայեցի դաստիարակութեան ի խնդիր՝ միութեան տարած բեղուն աշխատանքներուն վրայ:

Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան իր եւ Ազգային իշխանութեան բոլոր մարմիններուն կողմէ պատրաստակամու-

ցն իրենց օրինակը: Պիտի ընտրուի լաւագոյնը եւ պիտի օգտագործուի յառաջիկայ քառամեակին ընթացքին:

Լաւագոյն խորհրդապատկերի հեղինակը պիտի արժանանայ յատուկ յիշատակութեան եւ յուշանրւէրի:

Խորհրդապատկերի օրինակները մինչեւ 15 Մայիս 2016 պէտք է փոխանցել [office@homenetmen.org](mailto:office@homenetmen.org) ե-նամակի հասցէին:

Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքը 2018-ին արժանաւորապէս պիտի տօնակատարէ միութեան հիմնադրութեան 100-ամեակը:

2015-2019 քառամեակի Կեդրոնական Վարչութիւնը իր Ա. լիազումարի նիստերով որոշեց քառամեակին ընթացքին իրագործելի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներուն օգտագործել միութեան 100-ամեակի խորհրդապատկերը:

Առ այդ, խորհրդապատկերի պատրաստութեան համար առիթ կը տրուի բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որպէսզի պատրաստեն եւ փոխան-

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յարգելի հեռաւոր եւ մօտակայ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եղբայրներ,

Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի ակումբի շինարարական աշխատանքները ընթացք առած են եւ շուտով կ'ամբողջանան՝ մեր երիտասարդներուն շատոնց սպասած արդիական ակումբի մը կառուցը իրականութիւն դարձնելով:

Ուստի, Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մասնաճիւղի վարչութիւնը կ'ակնկալէ այս ակումբին մէջ իրենց պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցուցած եւ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութեան հաւատացող իւրաքանչիւր անդամէ, որ իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը մատուցէ կատարուող աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅՆՃԱՐԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՎ

34րդ Տարի, Թիթ 8-9, 398-399, 40 Էջ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	2-3
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	4-6
ԱՆԴՐԱԴԱՐՁ	7-10
ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ	10-11
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ	12-13
ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ	18-37



ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ 38-39

- 15 Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի նոր միատար Գեղարքունիքի մեջ
- 15 «Արձագանգ գաղթականներու» սեմինարի մասնակցութիւն
- 16 Բ. կարգի սեմինար մասնակցութեամբ Թիֆլիսի եւ Չաւախքի սկաուտներու
- 17 Բազմազաւակ ընտանիքներու բարեսիրական օժանդակութիւն



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողոսեան, Մարո Քէշիշեան, Սեան Նազարեան, Տիրան Շահինեան

**Վարչական կազմ:** Պարրիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղրրեան, Յարութ Ալանանեան, Նազո Հասիպեան, Ռիթա Օդուլեան, Արլին Շամմասեան:

**Էջադրում եւ ընդհանուր շեւտորում:** Արշօ Պալեան, **Կողմի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վաիէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 30 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հաւրաւանաւորի սակն է 5000 Լ.ն.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յայտնի ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պ. Համուտ, Պէյրութ, Լիբանան - 9611248043, 9611260117 - marzig@Homenetmen.org - 80486 Պուրճ Համուտ, Լիբանան - Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. - www.Homenetmen.org

# Ի՞ՆՉՊԷՍ ՆԵՐԳԻՐԱԲԵԼ...

**Ա**մեն ժամանակ ունեցած է իր մարտահրա-  
ւերները եւ զանոնք դիմագրաւելու միջոցնե-  
րը: Ինչ որ մեր օրերը կը յատկանշեն՝ ժա-  
մանակի եւ հեռաւորութեան կապուած մարտահրա-  
ւերներն են:

Ժամանակը կապուած է արագութեան հետ՝ օր-  
ւան պահանջներուն հետ արագ քայլ պահելու, արագ  
պատշաճելու, արագ զարգանալու եւ արագ փոխուելու  
հրամայականին հետ: Մինչդեռ հեռաւորութիւնը կապ-  
ուած է արդի արհեստագիտութեան հետ, որուն շնորհիւ  
աշխարհագրութիւն եւ սահման հասկացողութիւնները  
կը դառնան ժամանակավրէպ:

Սերունդներ այսօր հասակ կ'առնեն  
նոր պայմաններու մէջ, ուր ժամանակի եւ  
հեռաւորութեան հասկացողութիւնները  
կը ջնջեն մարդոց տարբերութիւնները եւ  
կը քանդեն հաւաքական ինքնութիւնները:  
Կը փտանգուին ազգային արժէքներ, մշա-  
կոյթներ եւ ձգտումներ:

Աշխարհը փոքրացած է այլեւս, իսկ  
երիտասարդութեան երազները մեծցած  
են: Երազներ, որոնք կապուած են ժամա-  
նակի եւ հեռաւորութեան նոր ըմբռնումնե-  
րուն: Արդարեւ, երիտասարդներ աւելի կ'աշխատին,  
բայց նուազ հարստութեան կը տիրանան: Աւելի բան  
ունին, բայց նուազ ուրախ են: Աւելի շատ ծանօթներ  
ունին, բայց նուազ՝ բարեկամներ:

Փոքրացող այս աշխարհը տազնապահար է եւ երի-  
տասարդութիւնը կը կրէ տեսակաւոր տազնապներու  
լուրջ հետեւանքները: Արեւելքը կ'ապրի կրօնական  
ծայրայեղութեան տազնապ, մինչ Արեւմուտքը կը դի-  
մագրաւէ ծայրայեղ ազատամտութեան եւ աշխար-  
հայնացման տազնապ: Արժէքներու բախում մը նկա-  
տելի է կրօնական, քաղաքակրթական եւ մշակութա-  
յին բոլոր մակարդակներու վրայ:

Այս բոլորին մէջ ո՞ր է հայ երիտասարդութիւնը:  
Մեր միութիւններուն մէջն է, շո՞ւրջն է, թէ... մեր կեան-  
քին գլխաւոր բացական է:

Իսկ ի՞նչ կ'ընենք մենք, իբրեւ մեծահասակներ, հա-

մայնքներ, ազգ ու պետութիւն, եկեղեցի եւ միութիւն-  
ներ, հայ երիտասարդութիւնը հաւաքական մեր կեան-  
քին մէջ ներգրաւելու համար:

Ընդունինք, որ ցարդ որդեգրուած միջոցները իրենք  
զիրենք սպառած են: Նոր իրականութիւնները կը թե-  
լադրեն նոր մօտեցումներ: Համայնքային մեր կառոյց-  
ները սկսած են կորսնցնել երբեմնի իրենց գրաւչու-  
թիւնը: Անցեալի գործունէութեան դրամագլուխը  
սկսած է մաշիլ, եթէ մաշած չէ արդէն: Միութեանկա-  
նութիւնը դադրած է ժառանգական յատկանիշ մը ըլ-  
լալ: Չաւակներ անպայման չեն հետեւիր իրենց ծնող-  
ներու օրինակին, որովհետեւ դաստիարակութիւն հաս-

կացողութիւնը փոխուած է եւ հարցում մը  
սկսած է ինքզինք պարտադրել, թէ՛ աւան-  
դական մեր արժէքները այլեւս որքանո՞վ  
կը համապատասխանեն նոր սերունդի  
մտահոգութիւններուն, պայմաններուն եւ  
սպասումներուն:

Այսօրուան երիտասարդութիւնը շատ  
աւելի բան գիտէ՝ քան իր ծնողներն ու պա-  
տասխանատուները: Կռապաշտ է ան. կուռ-  
քը մեքենա՛ն է, գործիքը. հեռաձայն, համա-  
կարգիչ, հեռատեսիլ թէ այլ: Ան կ'ապրի

երեցներէն տարբեր վայրի մը մէջ, որ անիրական է, երե-  
ւակայական է: Համացանցի աշխարհն է այդ, ուր ան  
աւելի ժամանակ կ'անցընէ՝ քան իր հարազատ տան ու  
շրջանակին մէջ: Ի՞նչպէս հասնիլ այդ աշխարհը: Ի՞նչ  
լեզուով հաղորդակցիլ այդ տղոց ու աղջիկներուն հետ,  
որոնք օրէ օր կը տիրապետեն ընկերային հաղորդակ-  
ցութեան այնպիսի միջոցներու, որոնք հարցականի  
կ'ենթարկեն անպայման քով-քովի գալու, ժողով-սեմի-  
նար կատարելու անհրաժեշտութիւնը:

Երիտասարդութիւնը նորութիւն է արդիականու-  
թիւն կը փնտռէ իր շուրջ: Հետամուտ է լայն հորիզոն-  
ներու: Չի փափաքիր կառուցային-կանոնագրային  
կաղապարներու ենթարկուիլ: Ան կը նախընտրէ միու-  
թեանկան աշխատանքի մասնակցիլ, բայց միութեան  
մը չանդամակցիլ: Մնալ համակիր՝ քան յանձնառու-  
թիւն եւ պատասխանատուութիւն ստանձնել: Գործել





առանձին նպատակի մը համար՝ քան միութենական պարտաւորութիւններու շարքի մը համար:

Նորերու հետաքրքրութիւնը շատ ատելի համարողային հարցերու շուրջ է՝ քան ազգային եւ միութենական մտահոգութիւններու, որովհետեւ առաջինին գործադրաշտը անսահման է, ըստ իրենց, մինչդեռ ազգայինն ու միութենականը դատապարտուած են մնալու սահմանափակ շրջանակի մէջ:

Այս բոլորը իրականութիւններ են, որոնք անպայման թելադրել կու տան յարմարիլ նոր կացութիւններուն եւ այսուհետեւ գործել ատելի արագ կշռոյթով, դաստիարակութեան եւ քարոզչութեան արդի մօտեցումներով, տեղեկատուական արհեստագիտութեամբ, կառուցային ժամանակակից յարմարութիւններով եւ մեր շրջապատին ատելի լայնօրէն բացուելու քաղաքականութեամբ:


Պէտք է հասնիլ մեզմէ հեռու գտնուող երիտասարդութեան: Իսկ հասնելու համար պէտք է արդիականանալ եւ զօրանալ: Մրցակցութեամբ լեցուն այսօրուան աշխարհը տեղ չունի տեղքայլ ու ետքայլ կատարողներու: Ժամանակն է մեր հաւատքին միացնելու գիտութիւնը եւ երիտասարդութեան ներգրաւման համար որոնելու անցեալէն տարբեր՝ ատելի սերտուած, ատելի համոզիչ եւ ազդու միջոցներ:

Ներգրաւել երիտասարդութիւնը, բերել զայն մեր մօտ, անոր փոխանցել հայեցի ոգի եւ դաստիարակութիւն, որպէսզի ան հպարտ զգայ իր հայկականութեամբ, զօրանայ իր արմատներով եւ մեծնայ՝

Հաւաքական մեր կեանքին համար,  
Հայութեան եւ Հայաստանին համար:

### Հ.Ա.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ, ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Ձէյթուն, Կոնիպաս, Էրեբունի, Արուիեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաւիր, Էջմիածին, Մարտունի/Չօրաքար, Մարտունի/Ճովինար, Կիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոյի, Պուրճ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժրտէյրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղարաւ, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գորինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմելո, Ալքմար, Առնհէմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Ստրեթթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատի:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիձ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Գրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթեպելլօ, Փասադինա, Կլէմսթըյլ, Օրէնճ Բաունթի, Սան Գեռնանիո, Սան Տիէկօ, Ինլընդ Էմիլայր, Սանթա Գլարա, Բրեսկէնա Հոլիոյր, Պրոպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Շիքաօ, Ֆիլադելֆիա, Տիքսոյք, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրես, Գորյոպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արաքս»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.



# ԼԵՎԱՄ-Ը 50 ՏԱՐԵԿԱՆ Ի ԻՆՉՈ՞Ւ ԵՒ Ի՞ՆՉՊԻՍ ՄԿՍԱԻ ԱՆ

**Լ**իբանանահայ դպրոցներուն մէջ մարմնամարզը կիրարկելու եւ զարգացնելու հարցը եղած է Հ.Մ.-Լ.Մ-ի գլխաւոր մտահոգութիւններէն մէկը: Հ.Մ.-Լ.Մ-ի իրերայաջորդ վարչութիւններ եւ պատասխանատուներ մեծ ճիգ թափած են, ժամանակ տրամադրած, նիւթական զոհողութիւն կատարած են մարզանքի եւ մարմնակրթութեան սէրը վառ պահելու համար աշակերտութեան մօտ:

Այն լաւ օրերուն, երբ վարժարանները մարզանքի մասնագէտ ուսուցիչներ ունէին, ամէն տարեվերջին, անոնք կը կազմակերպէին մարզահանդէսներ, մասնակցութեամբ վարժարանի աշակերտութեան: Այդ մարզահանդէսները մեծ խանդավառութիւն կը ստեղծէին թէ՛ աշակերտութեան եւ թէ՛ ծնողներուն մօտ: Այդ շրջանին, գրեթէ քսանամեակ մը, մինչեւ 1950, մեծ դեր կատարեց մարզանքի ուսուցիչ, Հ.Մ.-Լ.Մ-ական սկաուտ խմբապետ եղբ. Լեւոն Աբգարեանը, որ Սուրբիոյ եւ Լիբանանի հայկական վարժարաններու մարմնակրթութեան գլխաւոր հիմնադիրը եղաւ: Ժամանակի ընթացքին, սակայն, այս գեղեցիկ երեւոյթը կորսնցուց իր փայլքը, տարւէ տարի նուազեցան մարզահանդէսները եւ գտնուեցան վարժարաններ, որոնք իրենց դասացուցակներէն վերցուցին մարզանքի դասը նիւթական խնայողութեան պատճառաբանութեամբ:

Բայց մը ստեղծուեցաւ մեր կրթական կեանքին մէջ, ու այդ բացը զոցելու պարտականութիւնը ստանձնեց Հ.Մ.-Լ.Մ-ը կազմակերպելով միջ-վարժարանային մարզահանդէսներ:

Միջ-վարժարանային մարզահանդէսները տեղի ունեցան 1958-ին, 1961-ին եւ 1962-ին, Հ.Մ.-Լ.Մ-ի կազմակերպութեամբ եւ Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին հովանաւորութեամբ:

11 ազգային վարժարաններու եւ Համազգայինի ձեմարանի 1500 աշակերտներ մասնակցեցան մարզահանդէսներուն, որոնց ընդհանուր ղեկավարութիւնը ստանձնեց մարմնակրթութեան բազմապատակ ուսուցիչ եղբ. Յովհաննէս Տէր Յարութիւնեան:

Արտասովոր եւ դժուար պայմաններու մէջ կը պատրաստուէին այդ մարզահանդէսները: Ընդհանուր ղեկավար մարզանքները կը սորվեցնէր վարժարաններու մարզանքի ուսուցիչներուն, որոնք, իրենց կարգին, կը սորվեցնէին աշակերտութեան: Ապա, վարժարաններու աշակերտները կը հաւաք-



1990-ական տարիներ. ԼԵՎԱՄ-ի եւ աթլէթի յանձնախումբերու պատասխանատուներ:

ւէին մաս առ մաս ընդհանուր փորձերու համար: Այս ծանր աշխատանքին իրենց մասնակցութիւնը բերած են մարզանքի ուսուցիչներ Անդրանիկ Ղուպիկեան, Խաչեր Յակոբեան, Հայկազ Թրթոբեան, Ա. Գալստեան, Մ. Պալլըքեան, Կ. Կարպուշեան եւ Յ. Յակոբեան:

Մարզահանդէսները կը սկսէին աշակերտութեան շքեղ տոյանցքով: Ապա, բոլոր աշակերտներու մասնակցութեամբ տեղի կ'ունենային հաւաքական, չափական մարզանքներ, գիրքերու եւ յիբանանեան մաշրիի ծառի կազմութեամբ, գլաններով եւ մարմնամարզի փորձեր մեծ խանդավառութիւն ստեղծելով ներկայ բազմահազար հանդիսականներուն մօտ:

Երեք մարզահանդէսներն այ, որոնք տեղի կ'ունենան Պէյրութի քաղաքապետարանի դաշտին (1958) եւ «Շամունի մարզաւան»-ին մէջ (1961 եւ 1962), կը վայելեն հովանաւորութիւնը հոգեւորա Ջարեհ Կաթողիկոս Փայասլեանի եւ նախագահութիւնը Լիբանանի Թեմի օրուան Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի (հետագային Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ):

Ամբողջ դպրոցական տարեշրջանին կատարուած հեւ ի հեւ աշխատանքի արդիւնքն էին այդ մարզահանդէսները, որոնք պատրաստուած էին մեծ բժախնդրութեամբ հիացում պատճառելով բազմահազար հանդիսականներուն:

Միջ-վարժարանային մարզահանդէսները մեծ շարժում եւ հետաքրքրութիւն կը ստեղծէին աշակերտութեան եւ ծնողներու մօտ, բայց անոնք բաւարար չին ըլլար մարմնակրթու-



ՄԱՐԶԻԿ, 34ՐԿ ՏԱՐԻ, ԹԻԻ 8-9, 398-399



1967. ԼԵՎԱՄ-ի պատասխանատուներէն Բիւզանդ Թորիկեան (ծախէն երկրորդը) եւ Վարդգէս Եսկիպաշեան (աջէն առաջինը) մարզատէր աշակերտուիներու հետ:

թիւնը վարժարաններէն ներս ընդհանրացնելու համար:

Հ.Մ.-Լ.Մ. անգամ մը եւս կը ձեռնարկէ հիմնական աշխատանքի այս անգամ ստեղծելով ԼԵՎԱՄ-ը (Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերը, այսօր վերանուանուած Լիբանանահայ Երկսեռ Վարժարաններու Աշակերտական Մարզախաղեր): Արդարեւ, 19 Յուլիս 1966-ի իր 21-րդ նիստին, Հ.Մ.-Լ.Մ-ի Պէյրութի մասնաճիւղը կ'որոշէ այս նպատակին համար յառաջացնել մարզական յանձնախումբ մը, որուն անդամներ կը նշանակէ եղբայրներ Վարդգէս Էսկիպաշեանը, Գօգօ Եագուպեանը, Եղիշէ Խոստեղեանը, Էյի Գրիգորեանը, Սեպուհ Անթիքաճեանը եւ Ռագմիկ Թորիկեանը: Յանձնախումբին մօտ վարչութեան ներկայացուցիչ կը նշանակուի եղբ. Վարուժան Մուրատեանը:

ԼԵՎԱՄ-ը կը հետապնդէ մարզական եւ դաստիարակչական յուրճ նպատակներ, որոնք ընդգծուած են իր կանոնադրութեան «Նպատակ» բաժնին մէջ:

Յօդուած 2.- ԼԵՎԱՄ-ի նպատակն է զարկ տալ մարզական շարժումին իբրանանահայ երկսեռ վարժարաններէն ներս կազմակերպելով մարզական մրցաշարքեր դպրոցական տարեշրջանին եւ օժանդակելով վարժարաններուն կատարելագործելու համար իրենց մարզական դաստիարակչութիւնը:

ԼԵՎԱՄ-ը կը ձգտի.  
- Հայ աշակերտին մէջ արթնցնել սէրը հանդէպ մարմնակրթութեան:

- Ի մի հաւաքել տարբեր վարժարաններ յաճախող հայ պատանիները, զարգացնել անոնց մէջ մրցակցութեան եւ պայքարի ոգին՝ ազգային եւ եղբայրական միջնորդութիւն մէջ:

- Պատանիէն պատրաստել կարգապահ քաղաքացիներ: 1966-1967 տարեշրջանին կը կազմակերպուին ԼԵՎԱՄ-ի

առաջին խաղերը, որոնք կը շարունակուին մինչեւ այսօր: Խաղերու ազդանշանէն երեք տարի ետք, Մարտ 1969-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային 18-րդ Պատգամաւորական Ժողովը, նկատի ունենալով նախաձեռնութեան կարելորութիւնը եւ վարժարաններուն տարածքը Պէյրուսէն դուրս, շրջաններու մէջ եւս, կ'որոշէ ԼԵՎԱՄ-ի աշխատանքները փոխանցել Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:



Կը կազմուի ԼԵՎԱՄ-ի Շրջանային յանձնախումբը, որուն տասնամեակներ շարունակ կը ծառայեն եղբայրներ Բիւզանդ Թորիկեան, Վարդգէս Էսկիպաշեան, Վարդգէս Ծատուրեան, Բաֆֆի Գատեան, Ժազ Պոյաճեան, Հրայր Թապագեան, Ալէքս Պէրիքեան, Վարուժան Շամիան, Վարուժան Գէորգեան, Գէորգ Գարապոյաճեան, Թորոս Գոճակէօզեան, Կարո Աբրահամեան եւ անոնց շուրջ խմբուած հոյլ մը հաւատաւոր եղբայրներ եւ քոյրեր:

փինկ-փոնկ, Ֆուլթպոլ, մինի Ֆուլթպոլ եւ պասքեթպոլ: Մրցումներուն մասնակցեցան 8 տարեկանէն սկսեալ աշակերտ-աշակերտուհիներ:

Մրցումներու աւարտին, յատուկ բաժակներով պարգեւատրուեցան ԼԵՎԱՄ-ի լաւագոյն մարզիկը, մարզիկուհին եւ մարզիչը: Յատուկ վահաններու արժանացան նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի լաւագոյն արդիւնքները արձանագրած վարժարանները:

Այսպէս, տարուէ տարի զարգանալով, ԼԵՎԱՄ-ը կը դառնայ լիբանանահայ աշակերտութեան մարզական կեանքին առանցքը՝ դպրոցական տարիներուն:

Անցնող տարեշրջանին, ԼԵՎԱՄ-ը լիբանանահայ 23 վարժարաններէ համախմբեց 950 աշակերտներ, որոնք եօթը ամիս իրարու դէմ ճակատեցան ութը մարզախաղերով՝ ճատրակ, քրոս քաունթրի, ակթլէթիզմ, հեծելաքաշ, փինկ-փոնկ, Ֆուլթպոլ, մինի Ֆուլթպոլ եւ պասքեթպոլ:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL




PAVILLON MONCEAU PARIS



Full of charme,  
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer. The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



StudioVICKEN 2005 PARIS



# ՀԱՒԱՆԱԲԱՐ ԱՅՆՃԱՐԸ ԳՏԱԻ ՃԱՐԸ

## Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՍ

**Հ**ՄԼՄ-ի Այնճարի ակումբին նորոգման թէ ընդարձակման աշխատանքները գիս տարին իննսունականներու սկիզբը, երբ նման նորոգութիւններ տուն կաւ տային աւելին քննադատութեան՝ քան գնահատանքի, մինչեւ իսկ վէճի եւ սուր ընդհարումի:

Հայաստանը անկախացած էր, հայութեան երազը իրականացած էր: Տուն վերադարձի ծրագիրները այլեւս իրենց գործնական փուլը անցած էին: Արդեօք ինչո՞ւ նիւթական մսխել իր արեւամարը ապրող Սփիւռքի տարածքին:

Իրաւ, ինչո՞ւ: Այնուհետեւ գտնուեցան անոնք, որոնք տուն վերադարձի անմիջականութիւնը սակարկեցին, ներգաղթի ընկալման հայրենիքի անպատրաստութիւնը մատնանշեցին, մինչ ուրիշներ իբրեւ Հայաստանի թիկունք՝ Սփիւռքի գոյութիւնն ու շարունակականութիւնը ջատագովեցին:

Շուտով յստակացաւ, որ այդ «պահպանողական»ներու մօտեցումը եթէ ճիշդ չէր, գէթ իրականն էր, առարկայականն էր: Հայրենիքը ո՛չ միայն տուն վերադարձի հրաւէր չուղարկեց, այլ՝ ցաւ ի սիրտ դիմագրաւեց արտագաղթի մեծ ալիք:

Շուտով յստակացաւ, որ Սփիւռք ըստածը, ժողովուրդի աւելի մեծ թիւերով, թերեւս՝ կրկնապատկուած, պիտի մնայ եւ շարունակուի:

Հետեւաբար, ամբողջ եօթանասուն տարի Տուն վերադարձի երազներով օրօրուող Սփիւռքը շարունակեց օտար ափերուն վրայ իրեն պարտադրուած կեցութիւնը, տեղին շինելով նոր ակումբ, նոր եկեղեցի, ազգային նոր տուն:

Այսպէս, իրենք զիրենք հսկայական նոր մարտահրաւէրներու դիմաց գտան Սփիւռքը եւ նոյն Սփիւռքի հաւաքական կեանքը առաջնորդող կազմակերպութիւնները, որոնք ո՛չ միայն տարածքային իմաստով քայլ պահեցին աշխարհացրիւ

իրենց զաւակներուն հետ, այլեւ՝ քայլ պահեցին նաեւ ժամանակի պահանջներուն հետ, ուր այլեւս երկու սենեակը չէր կրնար ծառայել իբրեւ մասնաճիւղի հաւաքավայր, ո՛չ ալ թաղին քարքարոտ փոր-փոս խաղավայրը կրնար ծառայել իբրեւ ֆուլթայլի դաշտ: Ամէն բան պէտք էր ըլլար ժամանակակից պահանջներու համապատասխան, որովհետեւ ոչ միայն տեղւոյն իշխանութիւնները զայն պիտի պահանջէին, այլ՝ ինքնին մասնաճիւղին նորագիր պատանիներու ծնողները:

Իբրեւ հոգեւոր արժէքներու հաւատացող, մենք միշտ ալ պատերէն ներս որոնած ենք մարդու շունչն ու ոգին: Երբեք որեւէ շէնքի թէ կառուցուածքի լերկ պատերը առանձինն որեւէ իմաստ չեն ունեցած՝ առանց զանոնք շնչաւորող մարդոց: Միաժամանակ, սակայն, հաւատացած ենք, որ այսօրւան նիւթական աշխարհին մէջ, շէնքը, ակմբային կառոյցն ու ներքին յարմարութիւնները իրենց մեծ դերը ունին մարդը նոյն յարկէն ներս ներգրաւելու իմաստով, այլապէս սերունդներու դաստիարակութեան առաքելութիւնը աւելի պիտի դժուարանայ:

Հետեւաբար, կու գանք թելադրելու, որ ձեր սեփական տուներէն առաջ, հոգացէք ձեր հաւաքական կեանքի ամրոցներուն՝ եկեղեցի-դպրոց-ակումբի շինարարութիւնը, ուր ձեր զաւակները ձեր կարծածէն շատ աւելի երկար ժամեր պիտի անցընեն: Այդ ամրոցներուն մէջ անոնք պիտի գտնեն իրենց նկարագրին ու ազգային նկարագրին կազմաւորումը, ու ձեր շքեղ տունները աւելի պիտի արձագանգեն ձեր ձայնին, բախտաւոր պարագային՝ ձեր գոյգին:

Հետեւաբար, մինչեւ Հայաստան վերադարձը, եկէք Պէյրութ, Հալէպ, Լոս Անճելըս, ՀՄԼՄ-ի յարկին ներքեւ մեր զաւակներուն հոգիին խորը աւելի կանգուն ու թարմ պահենք տուն վերադարձի երազը եւ այսպէսով արդարացնենք ՀՄԼՄ-ի Այնճարի մասնաճիւղին ծախսած իւրաքանչիւր լուման:







դան կոստանեանի առաջնորդութեամբ, ցուցաբերած է անվերապահ զոհողութիւն, Հ.Մ.Ը.Մ-ական բարձր գիտակցութիւն եւ ոգի, յատկութիւններ որոնք հպարտութիւն եւ պատիւ կը բերեն մեր ակումբին եւ գաղութին:

Պոլինկի մեր խումբը 2015-ին տիրացաւ մրցաշարքի բաժակին:

Վերջապէս, յիշենք Ֆուլթոլլի մեր ակադեմիան, որ մեր ակումբի մարզական գլխաւոր առաքելութիւնն է:

Մեր վարչութիւնը մարզադաշտի կառուցման ծրագիրը իր աւարտին հասցուց Օգոստոս 2014-ին, կղզիին տնտեսական ամէնէն յոռի եւ աննպաստ պայմաններուն մէջ: Մարզադաշտը բազմատեսակ հնարաւորութիւններ կը խոստանայ մեզի: Այս ուղղութեամբ կ'ուզենք յայտարարել մեր վարչութեան որոշումը՝ յառաջիկայ ամառ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթոլլի շրջանային մրցաշարք մը կազմակերպելու:

Այս եւ նմանօրինակ ծրագիրներ մենք պիտի կարողանանք իրագործել շնորհիւ մեր 30 կրտսեր Ֆուլթոլլիստներուն, որոնք արհեստավարժ ձեռքերու մէջ կը մարզուին: Մենք պիտի կարենանք մրցունակ խումբ մը ունենալ շնորհիւ մեր մարզիչին՝ Ռոմիկ Խաչատրեանին, որուն ղեկավարութեան տակ մեր ակադեմիան թէ՛ որակական եւ թէ՛ քանակական աճ կ'արձանագրէ այսօր: Իր հմտութեամբ եւ մարզիկ-պատանիին հետ իր ճիշդ եւ արհեստավարժ մօտեցումով, ան բոլորին համար ընդունելի, հաճելի եւ վստահելի մարզիչ է: Այսօր մենք կը պատուենք ՌՈՄԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԸ իր ծառայութեան համար:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ-ի վարչութեան կողմէ կը շնորհաւորենք բոլոր մարզիկները իրենց մարզական բարձր ոգիին համար: Դուք իբրեւ մարզիկ, այս մակարդակին հասնելու համար զոհողութիւններ ըրած էք, գրկանքներ կրած էք, քրտինք թափած էք, հասնելու համար այս յաջող արդիւնքներուն:

Ձեր վարձքը կատար:

### Հարցազրոյցը վարեց Եղբ. Արմէն Քեօշկերեան ՀԱԼԷՊ

**Հ**այ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեր ցեղի Ֆիզիքական յարութեան ջանակիրն է, որ չի վհատիր եւ չ'ընկրկիր անթիւ դժուարութիւններու դիմաց: Իր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը իմաստալից է:

2015-ը նշեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 97-ամեակը, իսկ Հալէպի մէջ հիմնադրութեան՝ 90-ամեակը: Այս առիթով հանդիպում մը ունեցանք Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ տարիներու ծառայութիւն ունեցող, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Գաբրիէլ Պօղիկեանի հետ:

**Կրնա՞ք համառօտ կերպով ներկայացնել ձեր կենսագրական գիծերը եւ Հ.Մ.Ը.Մ-ական կեանքը:**

- Ծնած եմ Իսկէնտէրուն, Քրքք խան, 1930-ին: Ծնողքիս քաջալերանքով, 6-7 տարեկանիս անդամակցեցայ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն, դառնալով գայլիկ՝ «Վագր» խումբին մէջ, ապա՝ սկաուտ: Սանճաքի պարպումէն երկու տարի ետք փոխադրուեցանք Հալէպ, ուր յաճախեցի Միսիթարեան վարժարան: Գործի ասպարէզ մտնելով դարձայ լուսանկարիչ եւ հիմնեցի «Վենիս» լուսանկարչական հաստատութիւնը:

**Քանի՞ տարի ծառայած էք Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն, իբրեւ սկաուտ եւ մարզիկ:**

- Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն ներս մուտք գործած եմ 1937-ին, իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ: Տիրացած եմ փոքր առաջնորդ աստիճանին, ծառայած եմ մինչեւ 1961, երբ գործի բերումով չկարողացայ շարունակել սկաուտական կեանքս: Մասնակցութիւնս բերած եմ մասնաճիւղի տարեկան բանակումներուն եւ աւանդական տողանցքներուն: Մաս կազմած եմ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական Ֆուլթոլլի առաջին խումբին:

**Որո՞նք եղած են միութենական կեանքի ձեր անմիջական գործակիցները:**

- Սկաուտական շարքերէն ներս միութենական ընկերներ շատ ունեցած եմ, ինչպէս՝ Արսէն Դանիէլեան, Գէորգ Գանտասարեան, Սամուէլ Մկրտիչեան, Լեւոն Պապուլոզեան, «Վագր» խումբի խմբապետ Սեդրակ Քիլոյեան, Սուրէն Նազարեան, Յովհաննէս Խաչատրեան, որոնց հետ անմոռանալի յիշատակներ ունեցած եմ:

**Ձեր միութենական կեանքէն կարելի՞ է յիշել յատկանշական դրուագ մը, որ տակաւին թարմ կը մնայ ձեր յիշողութեան մէջ:**

- Յատկանշական եւ խանդավառ օր մըն էր 1947-ին, երբ Սուրբոյ անկախութեան առիթով, առաջին տողանցքը կա-

# ՀԱՒԱՏԱՐՄՕՐԷՆ ԾԱՌԱՅԵԼ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ԵՒ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ԱՆՈՐ ԱՆՈՒՆԸ

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ'ԸՍԷ ԵՂԲ. ԳԱԲՐԻԷԼ ՊՕՂԻԿԵԱՆ

տարեցինք Դամասկոսի մէջ, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբին, որուն ղեկավարն էր եղբ. Փիէր Քիլոյեան:

Կը վիշեմ Հ.Մ.Ը.Մ.Ի դաշտին փոխադրութիւնը: Երէջ սկառուները, գլխաւորութեամբ եղբայրներ Լուտեր Մասպանաճեանի եւ Նշան Թիւլիւզեանի, շուրջ եօթը օրուան ընթացքին, Ազիզիէի դաշտին թիթեղեայ ցանկապատերը քակելով փոխադրեցինք Նոր Գիւղ եւ հոն պատրաստեցինք Նաւասարդեան դաշտը:

1956-ին բախտը ունեցայ, աւանդական մեծ տողանցքին օրը, ակումբին մէջ տեսնելու ճորճ Մարտիկեանը: Նոյն օրը, ակումբին մէջ փառաւոր ընդունելութեամբ ղիմաւորեցինք զօրավար Դրօն, որ իր մասնակցութիւնը բերաւ աւանդական տողանցքին: Այդ օր տողանցքին իրենց մասնակցութիւնը կը բերէին Սուրիոյ գանազան շրջաններէն ժամանած





սկառուներ, որոնք հիւրընկալուեցան մեր տուներուն մէջ: Մասնակցած եմ տարեկան բանակումներու եւ անմոռանալի օրեր անցուցած եմ միութենական ընկերներու հետ:

Իբրեւ եզրափակիչ խօսք, ի՞նչ պիտի ըլլայ ձեր պատգամը Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդին եւ Հալիպի մեր ջերմ գաղութին:

- Նոր սերունդին կը մաղթեմ, որ միութենական կեանքէն հեռու չմնան, շատ բան ունին սորվելիք, հետեւաբար հաւատարմօրէն թող ծառայեն Հ.Մ.Ը.Մ.ին եւ միշտ բարձր պահեն անոր անունը:

Այս առթիւ, խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզի, որ միշտ կ'անմահացնէք մեր երէջ եղբայրները՝ թարմացնելով անցեալի անոնց յուշերը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home,  
away from home...

**Yerevan**  
32-38, Hanrabadoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)

Reservations

# ՖԻՖԱ-Ն ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆՆԵՐԲ



## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Ա**նցեալ տարի, Մայիս ամսուն, Մ. Նահանգներու դատական մէկ ատեանին կողմէ քրննարկուած հարցով մը պայթեցաւ Ֆուլթոնի միջազգային ֆետերասիոնին՝ ՖԻՖԱ-ի նիւթական գայթակղութիւններուն շարանը, որուն գլխաւոր ամբաստանեալներն եւ դատապարտեալներն էին Սէփ Պլէթըրն եւ Միշէլ Փլաթինին: Բնականաբար, այս երկուքը ունեցած են գործակիցներ ու համախոհներ: Բոլոր այս պաշտօնատարները ամբաստանուեցան եւ դատապարտուեցան կաշառակերութեան յանցանքով: Անոնց արգիլուեցաւ Ֆուլթոնով զբաղիլ:

Բնականաբար, այս կաշառակերութեան հիմնական դերակատարները եղած են ՖԻՖԱ-ի քարտուղար Պլէթըրն ու ԵՈՒ. ԷՖ. Ա-ի նախագահ Միշէլ Փլաթինին: Անոնք ամբաստանուեցան միլիոնաւոր տոլարներ կաշառք ստանալու, երկիրներու մրցաշարքեր կազմակերպելու իրաւունք ծախելու եւ մինչեւ իսկ... կարգ մը կարեւոր մրցումներու արգիւնքները նախապէս ճշգրտելու յանցանքով:

Մենք պիտի չքննարկենք այս գայթակղութեան ման-

րամասնութիւնները, այլ պիտի փորձենք կեդրոնանալ քանի մը երեւոյթներու վրայ, որոնք կրնան յուզել Ֆուլթոնասէրները:

Կարգ մը մեկնաբանները դիտել կու տան, որ այս հարցին արժարժման եւ նման պայթումի մը հասցնելուն մէջ դերակատար են եւրոպական երկիրները: Իրականութիւն է, որ վերջին երկու տասնամեակներուն, եւրոպական երկիրները, մանաւանդ Ֆուլթոնի մեծերը, բացարձակ կերպով հակադրուած էին Պլէթըր-Փլաթինի զոյգին: Անոնք Ֆուլթոնի իրականութեան մէջ հիմնական դերակատարներն են, այսինքն՝ Ֆուլթոնի աշխարհին մէջ շրջանառութեան մէջ դրուող գումարներուն մեծամասնութիւնը կու գայ մեծ երկիրներէն ու անոնց մեծ ակումբներէն: Ֆետերասիոններու շահու հիմնական աղբիւրները կը հանդիսանան այս երկիրներու մեծ

ակումբներուն մարզիկներուն փոխանցումները: Անոնց մրցումներուն դաշտի եւ պատկերասփուման մուտքերը կը կազմեն նիւթական եկամուտներու ողնայարը: Ֆուլթոնը կը ծաղկի ու տարածուի առաւելաբար անոնց միջոցով: Սակայն, այս բոլոր իրականութեան դիմաց, անոնք ոչ մէկ ձեւով առնչակից են գլխաւոր որոշումներու մէջ, ընդհակառակն՝ յաճախ որոշումները կը տրուին ի հեճուկս այս երկիրներուն եւ անոնց ակումբներուն: Պէտք է



ընդգծել, որ այս գալթակղուլթեան արմատները շատ հին են եւ կ'երթան մինչեւ ՖԻՖԱ-ի նախկին քարտուղար ժան Հաւելանթի օրերը: Ան եւս ամբաստանուած է բռնատիրուլթիւն հաստատած ըլլալու եւ Մոնտիալներու խաղերու արդիւնքները նախօրօք ճշդելու յանցանքով: Այս իմաստով արդար կամ անարդար, Սէփ Պլէթըր կը նկատուի Հաւելանթի արժանաւոր յաջորդը: Վերոյեալ երկուքը յաջողած են տարիներ շարունակ փոքր պետուլթիւնները կաշառել խոստումներով, նիւթականով եւ անոնց զօրակցուլթիւնը ապահովելով՝ որոշումները կեդրոնանուցած են իրենց ձեռքերուն մէջ: Բնականաբար կը խօսուի միլիոնաւոր տոլարներու կաշառքներու մասին:

Ահաւասիկ, հիմնականին մէջ այս երեւոյլթին դէմ էր եւրօպացիներուն պոռլթիւմը, որովհետեւ, ինչպէս նշեցինք, Ֆուլթպոլի մեծերը, որոնք նիւթական մատակարարներն են ՖԻՖԱ-ին, դարձած էին անգօր, որոշումներէն հեռու եւ նոյնիսկ որոշումները կը տրուէին անոնց հաշուոյն:

Անշուշտ, այս գալթակղուլթիւնը մեծ աղմուկ եւ հարցականներ ստեղծեց Ֆուլթպոլի մարզական մօտեցումին մէջ: Տարիներ շարունակ այն ամբաստանուլթիւնները, որոնք կ'ուղղուէին ՖԻՖԱ-ին՝ Մոնտիալներու արդիւնքներու գծով, հիմք ստացան: Բազմաթիւ Ֆուլթպոլասէրներու մօտ կասկած արթնցաւ նոյնիսկ իրենց երկիրներու ախոյեանուլթիւններու արդիւնքներու «մաքրուլթեան» շուրջ: Եթէ այս գալթակղուլթեանց գումարենք գրաւի գրասենեակներու գործառնուլթիւնները, Ֆուլթպոլի ակումբներու տարեկան պիւտճէները, ապա դէմ յանդիման կը գտնուինք գրամական հսկայական կայսրուլթեան մը դիմաց: Այս պայմաններուն մէջ, 26 Փետրուար 2016-ին, ՖԻՖԱ-ի նախագահ ընտրուեցաւ իտալական ծագումով գուլթերիացի Ճիաննի Ինֆանթինօ, որ 2009-էն ի վեր կը վարէր ԵՈՒ. ԷՖ. Ա.ի նախագահի պաշտօնը: Ան դժուար առաքելուլթեան մը առջեւ կը գտնուի: Անոր առաջին պարտականուլթիւնը պիտի ըլլայ վերականգնել ՖԻՖԱ-ի վարկը եւ վստահուլթիւն ներշնչել անոր հանդէպ:



թիւնները, Ֆուլթպոլի ակումբներու տարեկան պիւտճէները, ապա դէմ յանդիման կը գտնուինք գրամական հսկայական կայսրուլթեան մը դիմաց: Այս պայմաններուն մէջ, 26 Փետրուար 2016-ին, ՖԻՖԱ-ի նախագահ ընտրուեցաւ իտալական ծագումով գուլթերիացի Ճիաննի Ինֆանթինօ, որ 2009-էն ի վեր կը վարէր ԵՈՒ. ԷՖ. Ա.ի նախագահի պաշտօնը: Ան դժուար առաքելուլթեան մը առջեւ կը գտնուի: Անոր առաջին պարտականուլթիւնը պիտի ըլլայ վերականգնել ՖԻՖԱ-ի վարկը եւ վստահուլթիւն ներշնչել անոր հանդէպ:

PINK  
Kimberley™  
AUSTRALIA

PinkKimberley.com.au

*Diamonds beyond rare*



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



# ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՆՆԵՐՈՒ ԅՆԿՆԱԿՆՈՒԱԾ ՍԵՄԻՆԱՐ՝ ՄՈԼՏԱԻՒՈՅ ՄԷՁ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**11**-13 փետրուար 2016-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի երեք անդամներ մասնակցեցան Եւրոասիոյ շրջանի սկաուտական կազմակերպութիւններու սեմինարին, որ յատկացուած էր կանոնադրային փոփոխութիւններու նիւթին: Սեմինարին գլխաւոր նպատակն էր ազգային սկաուտական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն փոխանցել համապատասխան գիտելիքներ՝ սկաուտական կազմակերպութեան կանոնադրութեան կարեւորութեան, բարեփոխման եւ կանոնադրային յատուկ յանձնախումբ ստեղծելու ձեւին մասին:

Եւրոասիոյ սեմինարին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ներկայացուցին Երեւանի կեդրոնական գրասենեակի տնօրէն Սիրեկան Գէորգեանը եւ կանոնադրային բարեփոխումներու յանձնախումբի համակարգող քոյր Լիլիթ Զաքարեանը: Իբրեւ Եւրոասիոյ շրջանային կոմիտէի անդամ՝ անոնց հետ Քիշնեւ մեկնեցաւ եղբ. Հրաչ Ծմաւոնեան:

Շրջանի սկաուտական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն կողքին, դասընթացքին ներկայ գտնուեցան Եւրոասիոյ աջակցութեան կեդրոնի աշխատակիցները, ինչ-



պէս նաեւ՝ Եւրասիական շրջանային կոմիտէի նախագահ Իրինա Պրուիձէն: Սեմինարը վարեցին Սկաուտական Շարժումի Համաշխարհային կոմիտէի կանոնադրային յանձնախումբի նախագահ Տէյվիտ Շելմերթայնը (Մեծն Բրիտանիա) եւ փոխ նախագահ Մելիսա Քազակրանտէն (Պրագայ):

Սեմինարին ընթացքին քննարկուեցան կանոնադրութեան ընդհանուր հասկացութիւնը, հիմնական բաղադրիչները, ազգային

սկաուտական կազմակերպութիւններու եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի կանոնադրութիւններուն միջեւ կապը, գործող կանոնադրութիւններուն թերութիւնները եւ այլն: Անդրադարձ եղաւ Եւրոասիոյ աջակցութեան կեդրոնին տեւաբար օգնութեան ձեռք երկարելու պատրաստակամութեան եւ ազգային սկաուտական կազմակերպութիւններու պարտաւորութիւններուն: Սեմինարին վերջին օրը նուիրուած էր ընդհանուր աջակցութեան գնահատման գործիքի (GSAT) ներկայացման:

Սեմինարին աւարտին, մասնակիցները ներկայացուցին իրենց ապագայ գործունէութեան քայլերը, որուն յաջորդեց սեմինարին արժեւորումը եւ փակումը:

## ՔՈՅՐ ՍԻՒՆԷ ԳԷՈՐԳԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՄՐՑԱՆՔԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**Ա**րդէն իսկ հրապարակուած են սկաուտական եւրոասիական շրջանի լուսանկարչական մրցանքին արդիւնքները: «Սկաուտութիւնը աւելի լաւ աշխարհի մը համար» խորագրով մրցանքին առաջին հանդիսացած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամ քոյր Սիւնէ Գէորգեանը: Քրոջ լուսանկարը տեղ գտած է սկաուտական եւրոասիական շրջանի այս տարուան օրացոյցին առաջին էջին վրայ:



լու համար:

Այս առիթով, յատուկ հանդիսութեամբ մը, քոյր Սիւնէ Գէորգեան իր մրցանակը ստացաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կեդրոնական գրասենեակին մէջ:

Մրցանակը ստանալէ ետք, քոյրը իր երախտագիտութիւնը յայտնեց եւրոասիական շրջանի սկաուտական մեծ ընտանիքի քոյրերուն եւ եղբայրներուն՝ իր օգտին քուէարկելու եւ բաղձալի յաղթանակին արժանանա-

# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՆՈՐ ՄԻԱՒՈՐ ԳԵՂԱՐԳՈՒՆԻՔԻ ՄԷՉ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**Հ**ՄԸՄ-ՀԱՍԿ-ը կը շարունակէ բազմապատկելի շարքերը: Սկսած սկսած միաւորներու աշխարհագրութիւնը հետզհետէ կ'ընդլայնի՝ ներառելով նոր շրջաններ:



եւ նշանակուեցաւ պատասխանատու կազմ:

Միաւորի պաշտօնական բացման հանդիսաւոր արարողութեան մեծ ոգեւորութեամբ սպասող սկստակներուն համար այդ օրը նշանակալից էր: 25 գայլիկ-արծուիկ եւ 35 արի-արենոյշներ, հիւրերու ներկայութեամբ, տուին իրենց սկստակական խոստումը, որով ամրագրեցին միա-

ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի 10-րդ միաւորը հիմնուեցաւ Գեղարգունիքի մարզի Ծովինար գիւղին մէջ: Սեւանայ լիճին հարաւ-արեւմուտքը՝ Մարտունիի շրջանը գտնուող այս գոգտրիկ գիւղը ունի աւելի քան 180 տարուան պատմութիւն: Ան 145 քմ. հեռու է Երեւանէն: Տարածութիւնը 36.3 քառ. քմ. է եւ ունի մօտ 5000 բնակիչ:

ւորին գոյութիւնն ու զարգացման հեռանկարները: Նոյն օրը, ներկայ ծնողներու եւ շահագրգիռ գիւղացիներու համար, տեղւոյն դպրոցի դահլիճին մէջ կազմակերպուեցաւ ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի մասին ֆիլմի ցուցադրութիւն:

Շուրջ երեք ամիս առաջ ստեղծուած սկստակական խումբի անդամներուն թիւը արագօրէն աւելցաւ, ուստի ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան որոշումով, 29 Նոյեմբեր 2015-ին խումբին տրուեցաւ միաւորի կարգավիճակ

Նորաստեղծ միաւորի վարչութեան անունով ներկաները ողջունեց եւ յաջող ընթացք մաղթեց ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի ընդհանուր խմբապետ եղբ. Գէորգ Գասպարեան: Ներկաները իրենց կարգին շեշտեցին սկստակութեան դերը պատանիներու դաստիարակութեան եւ համայնքային կեանքի աշխուժացման մէջ:

## «ԱՐՁԱԳԱՆԳ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ» ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**Դ**անիոյ սկստակական կազմակերպութեան (KFUM-Spejderne I Danmark) նիւթական աջակցութեամբ, ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան անդամ եղբ. Արթուր Խաչատրեան 27-29 Նոյեմբեր 2015-ին, Քոփենհագենի մէջ մասնակցեցաւ Համաշխարհային Սկստակական Շարժումին կողմէ կազմակերպուած «Արձագանգ գաղթականներու» սեմինարին:



Սեմինարը բաղկացած էր լիագումար նիստերէ եւ աշխատանքային քննարկումներէ:

Սեմինարին ներկայ էին եւրոպական 27 երկիրներէ աւելի քան 100 մասնակիցներ, որոնք ժամանած էին Քոփենհագեն՝ քննարկելու համար, թէ ի՞նչպէս կարելի է օգնել Սուրիայէն, Աֆղանիստանէն, Էրիթրիայէն եւ այլ երկիրներէ եկած գաղթականներուն:

Քննարկումներու ժամանակ արծարծուեցան Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներու առջեւ ծառայած հիմնական հարցերը: Գլխաւոր նիստին բանախօսները ներայացուցին իրենց անձնական պատմութիւնները եւ բաժնեկցեցան իրենց կարծիքներն ու տպաւորութիւնները:

Սեմինարին վերջին օրը մասնակիցները մշակեցին գործնական ծրագիրներ: «Նուիրատուներու շուկան» որոշ պատկերացում տուաւ, թէ որո՞նք են այն նուիրատուները, որոնք կրնան ֆինանսաւորել առաջարկուած ծրագիրները:



# «ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**Վ**երջերս, Հայաստանի Ազգային Ժողովին մէջ ստեղծուեցաւ «Սկաուտութեան բարեկամներ» պատգամաւորական խումբը, որուն մաս կազմեցին Ազգային Ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանով, Հ.Յ.Դ. խմբակցութեան անդամ՝ պատգամաւոր Միքայէլ Մանուկեան եւ Ազգային Ժողովի պատգամաւոր Վահէ Յովհաննիսեան:

Պատգամաւորական խումբը 15 Դեկտեմբեր 2015-ին Ազգային Ժողովին մէջ հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, ուր իր հիմնադրութիւնը հռչակելով ան նշեց, որ խումբին կազմութիւնը պայմանաւորուած է հասարակական յարաբերութիւններու ձեւաւորման գործին մէջ երիտասարդութեան ներգրաւման կարեւորութեամբ, օրէնսդրական համապատասխան հիմքերու ապահովումով եւ այս հարցին շուրջ միջազգային համագործակցութեան ընդլայնման անհրաժեշտութեամբ:

«Սկաուտութեան բարեկամներ» պատգամաւորներու խումբ բաց է անդամակցութեան համար: Խումբը մաս պիտի կազմէ սկաուտ խորհրդարանականներու համաշխարհային միութեան եւ 2016-ին Շուէտի մէջ պիտի մասնակցի միութեան 8-րդ խորհրդաժողովին:



## Բ. ԿԱՐԳԻ ՍԵՄԻՆԱՐ՝ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՋԱԻԱԽՔԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**28**-31 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի մասնաճիւղը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան եւ խմբապետական խորհուրդին աջակցութեամբ,

կազմակերպեց սկաուտական գիտելիքներու Բ. կարգի սեմինար: Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան առաջարկով, սեմինարին մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի մասնաճիւղէն տասը եւ Ջալախքէն տասներկու հայ երիտասարդներ, որոնք յառաջիկային սկաուտական աշխատանքներ պիտի ծաւալեն իրենց շրջաններուն մէջ:

Հայոց բանակին տօնը յատուկ կերպով նշելու համար, սեմինարին առաջին օրը, մասնակիցները այցելեցին Եռաբլուր՝ իրենց յարգանքի տուրքը մատուցանելու հայրենիքի համար գոհուած հայորդիներուն: Ազատամարտիկներուն նուիրուած յուշակոթողին մօտ, սեմինարին մասնակիցներուն ներկայութեամբ, Երեւանի կեդրոնի միաւորի տասնհինգ երէց-պարմանուհիներ տրւին իրենց սկաուտական երգումը:

Հանդիսաւոր արարողութենէն ետք, սեմինարին մասնակիցները վերադարձան «Արամ Մանուկեան երիտասարդական կեդրոն», ուր տեղի ունեցաւ սեմինարը:

Սեմինարի աշխատանքներու ծիրին մէջ, կազմակերպուեցաւ Երեւանի







«Հայկ Յովսէփեան» բանակավայր այցելութիւն, ուր կազմակերպուած խաղերն ու խարուկահանդէսը աւելի ոգեւորեցին մասնակիցները եւ նպաստեցին սկաուտական ընկերային ոգիի ամրապնդման:



Տեսական եւ գործնական նիւթերով հարուստ եւ օրեայ սեմինարին ընթացքին, մասնակիցները հարստացուցին իրենց սկաուտական գիտելիքներն ու փորձառութիւնը:



## ԲԱԶՄԱԶԱԻԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

**2** 016-ի տօնական օրերու նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կեդրոնի միաւորի սկաուտները եւ երէցները այցելեցին բազմազաւակ երկու ընտանիքներու, որոնց իբրեւ նուէր փոխանցեցին սկաուտներու կողմէ հաւաքուած հագուստներ, խաղալիքներ եւ սննդեղէն:

Նախաձեռնութիւնը եկաւ անգամ մը եւս սկաուտներուն մէջ ամրացնելու մարդասիրական զգացումները եւ առիթ տուաւ հաւատարիմ մնալու սկաուտական իրենց խոստումին: Այս քայլը եկաւ նաեւ ապացուցելու, որ սկաուտները հաւատարիմ են իրենց ուղեգիծին եւ շարունակողներն են Պէյտրն Փաուլլեան այն մտքին, որ երջանկութիւն տանող իսկական ուղին ուրիշներուն երջանկութիւն պարգեւելն է:





# ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՍԿՈՒՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Մարինե Գալաթեան-Մանուշեան  
ՆԻԿՈՍԻԱ

պանծայի տողանցքով, բարեկեցին ներկաները եւ յառաջացան սկաուտական կազմին ներքեւ, ուր յաջորդաբար երգեցին Հայաստանի եւ Կիպրոսի քայլերգները:

Կիպրոսի սկաուտական 77-րդ խումբին դրօշը:

Բոլորին յաջորդեց եղբ. Արմէն Այվազեանի խօսքը, իբրեւ ներկայացուցիչ մասնաճիւղի խմբապետական կազմին: Եղբայրը գնահատելով սկաուտներու, ծնողներու եւ սկաուտական ընդհանուր կազմին միամեայ գործունէութիւնը՝ շնորհակալութիւն յայտնեց բոլորին եւ յարատեւման մաղթանքով փակեց խօսքը:

Օրուան հանդիսավար քոյր Մարինե Գալաթեան-Մանուշեանի բացման խօսքէն ետք, արծուիկները սկաուտական սուլիչին հետեւելով կազմեցին բոլոր մը, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի

**Կ**իպրոսի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի սկաուտական երկրորդ խոստման արարողութիւնը արժանավայել կերպով տեղի ունեցաւ միութեան դալարագեղ դաշտին մէջ, սկաուտական ամբողջ կազմին ներկայութեամբ: Հիւրերու շարքին էր Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ՝ երեսփոխան Վարդգէս Մանտեսեան: Ներկայ էին նաեւ միութենական պատասխանատուներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի վարիչներ:

Խոստման արարողութիւնը ընթացք առաւ մեր սրտին հարազատ չորս դրօշներու առաջնորդութեամբ եւ սկաուտական թմբուկներու կշռոյթով: Սկաուտներ,



Նախքան խոստման արարողութիւնը տեղի ունեցաւ պարզեւաբաշխում, ինչ որ ոգեւորեց եւ խրախուսեց սկաուտները: Իրենց պարտաճանաչ գործունէութեան համար գնահատագիրներ ստացան մեծ թիւով սկաուտներ: Տեղի ունեցաւ ընթերցասիրութեան, մարզական ոգիի, արուեստի շնորհներ ունեցողի, խմբային եւ անհատական լաւագոյն սկաուտներու շքանշաններու տուչութիւն:

Արարողութեան յայտագիրը ընդգրկեց նաեւ պաշտօններու տուչութիւն: Մասնաճիւղի սկստական խմբապետական կազմին միացան Փոխ Առաջնորդ եղբ. Բաֆֆի Կէօքճեան, իբրեւ փոխ օգնական, Փոխ Խմբապետ քոյր Հուրի Ղազարեան, իբրեւ երէցներու պատասխանատու եւ Վարիչ Առաջնորդ եղբ. Մերուժ Միրզոյեան, իբրեւ գալլիկ-արծուիկներու օգնական պատասխանատու:

Հասաւ խոստման արարողութեան ըսպասուած պահը: Յայտարարուեցան անունները բոլոր անոնց, որոնք պիտի փոխանցուէին աւելի բարձր խումբեր, եւ իւրաքանչիւր խումբ (գալլիկ-արծուիկ, արիարենոյշ) կատարեց ծառայութեան եւ հաւատարմութեան իր խոստումը:

Ներկաները խոստման արարողութեան հետեւեցան երջանկութեան եւ հպարտութեան զգացումներով: Իւրաքանչիւրը կարծես ինքն իր մէջ կը վերանորոգէր իր խոստումը:

Խոստման արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:


**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄ**

Խոստման արարողութեան յաջորդեց Կիպրոսի մէջ



Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարժումի հիմնադրութեան առաջին տարեդարձին նշումը: Այս ուրախ առիթով ներկայ հիւրերը հատեցին Հ.Մ.Ը.Մ.ի վահանով զարդարուած գեղեցիկ կարկանդակը:

Այսպէս, միասնաբար տօնեցինք Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի սկստութեան առաջին տարեդարձը: Արժեւորեցինք նուիրական գործը, որ գաղութին համար նուաճում մըն է եւ անգամ մը եւս հաստատեցինք, որ որեւէ գործ երբ ուրիշին անկարելի կը թուի, մեզի համար կարելի է, հաւաքական ջանքով եւ միութենական կամքով:



*Elegance Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.

Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ  
ՄԻՋ ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ 45-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ  
ՊԱՏԿՈՒԵՑԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ Armen

Լիոնի Սարմազեան  
ՔԵՄՊԻՐԻՃ

Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային 45-րդ մարզախաղերը տեղի ունեցան Մոնթրէլի մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան: Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու, Քէմպրիճի, Թորոնթոյի, Լաւալի եւ Մոնթրէլի ֆուտբոլի 19, պասքեթբոլի 13, ֆլոր հաքիի 3 խումբեր եւ փինկ-փոնկի 13 մարզիկներ: Ընդամենը 350 մարզիկ-մարզիկուհիներ մասնակցեցան այս խաղերուն, որոնք մեծ խանդավառութիւն ստեղծեցին շրջանին մէջ: Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջաններուն մեծաթիւ մասնակցութիւնը յատուկ փայլք մը տուաւ մարզախաղերուն:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԱՆԻՍԸ

Մարզախաղերուն յաղթանակի պարահանդէսը տեղի ունեցաւ աւելի քան 600 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ներկայութեամբ: Բարի գալուստի խօսք արտասանեց հիւրընկալ մասնաճիւղի ատենապետ եղբ. Բաֆֆի Աբանեան, որմէ ետք երգիչ Սազօ Թաշճեան խանդավառեց միջնորդը: Ներկաներուն, յատկապէս երիտասարդութեան, ուրախութիւնը անսահման էր:

մրցումները, փակման պաշտօնական հանդիսութիւնն ու տողանցքը տեղի ունեցան Ս. Յակոբ Ազգային վարժարանի մարզասրահին մէջ, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի շեփորախումբին, մասնակցութեամբ սկստական կազմին եւ մարզիկներուն: Հանդիսութեան ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Մեղրիկ Եպս. Բարիքեան, Ս. Յակոբ մայր

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ  
Մարզախաղերուն աւարտական



եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան, Ազգային վարչութեան անդամ եղբ. Լեւոն Պէնկեան, Հ.Յ.Գ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային վարչութեան եւ քոյր միութիւններու շրջանային եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան նախկին փոխ ատենապետ եղբ. Վարուժան Սերոբեան, Շրջանային վարչութեան նախկին ատենապետներ եւ այլ հրաւիրեալներ: Հանդիսութեան ներկայ էր նաեւ Քէպէք Նահանգի խորհրդարանի կրտսերագոյն անդամ՝ երեսփոխան Ժան Հափլը, որ այս առիթով փոխանցեց իր սրտի խօսքը:

Մ. Նահանգներու, Գանատայի եւ Հայաստանի քայլերգներէն ետք, օրուան հաղիսավար քոյր Ռուբինա էքմէքճեան ներկաները հրաւիրեց յոտընկայս վայրկեան մը լուսնամբ յարգելու յիշատակը նորոք վախճանեալ Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանի:

Յաջորդեց մարզախաղերու յաղթական խումբերու մարզիկներու բաժակներուն եւ մետալներուն բաշխումը (մրցանակակիր մասնաճիւղերուն ցանկը տեսնել առանձին):

Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ

Նաճարեան խօսք առնելով ողջունեց մասնաճիւղերու վարչութիւնները, յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութիւնը, որ ստանձնեց մարզախաղերուն կազմակերպման աշխատանքը: Եղբ. Նաճարեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու խումբերու մասնակցութեան, ինչ որ յատուկ խանդավառութիւն ստեղծեց շրջանին մէջ:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան շնորհաւորեց մասնակից շրջանները, մասնաճիւղերը, յանձնախումբերն ու մարզիկները: Ան շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.Ի նպատակին վրայ, որն է՝ հայակերտում եւ մարդակերտում: Հ.Մ.Ը.Մ.Ի առաջնաճերթութիւններէն է երիտասարդութեան համախմբումը, որպէսզի կարենայ անոնց ներշնչել ազ-

գային ոգի, հայկական պատկանելիութիւն եւ հպարտութիւն, նշեց եղբ. Թօփուզեան:

Գանատայի Թեմի Առաջնորդ Մեղրիկ Եպս. Բարիքեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ «Պահպանիչ»ով եզրափակեց պատգամը:

Տողանցքը եւ հանդիսութիւնը փակեցան «Յառաջ նահատակ» քայլերգով:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Գրիգորիս (Պէլրուք)	Պողարեան 300 \$
● Գարսէն Տէր Կարապետեան (Լուս Աճճելլոս)	100 \$
● Վարդգէս Վարդանեան (Նիւ Եորք)	100\$

ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՅՈՒԹՊՈՒ	ՊԱՏՔԵԹՊՈՒ
<p><b>Վեթերան</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Քէմպրիճ</p>	<p><b>Երէց Տղաք</b></p> <p>1. Լուս Աճճելլոս</p> <p>2. Նիւ ճրրգի</p>
<p><b>Երէց տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Թորոնթո</p>	<p><b>13-15 Տարեկան Տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Թորոնթո</p>
<p><b>16-18 Տարեկան Տղաք</b></p> <p>1. Թորոնթո</p> <p>2. Մոնթրէլ</p>	<p><b>13-15 Տարեկան Աղջիկներ</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Թորոնթո</p>
<p><b>13-15 Տարեկան Տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Լաւալ</p>	<p><b>ՓԻՆԿ-ՓՈՆԿ</b></p> <p>Լաւալ</p>
<p><b>12 Տարեկանէն Վար Տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Նիւ Եորք</p>	<p><b>ՃԼՈՐ ՀՈՔԻ</b></p> <p><b>Երէց Տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ Բ.</p> <p>2. Թորոնթո</p>
<p><b>10 Տարեկանէն Վար Տղաք</b></p> <p>1. Մոնթրէլ</p> <p>2. Նիւ Եորք</p>	



# ՃԱՏՐԱԿԻ ԲԱՅ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ԳԱՆԱՏԱՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ



## Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

**Հ**այոց Յեղասպանութեան յիշատակին կատարուած զանազան նախաձեռնութիւններու շարքին, Հ.Մ.-Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղը, վերջերս, գեղեցիկ գաղափարը ունեցաւ կազմակերպելու ճատրակի բաց մրցաշարք մը՝ «Chess to remember» անունով: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին ճատրակի զանատացի հանրածանօթ դէմքեր. մէկ մեծ վարպետ, չորս միջազգային վարպետներ,

աղջկանց երկու միջազգային վարպետներ, ՖԻՏԷ-ի հինգ վարպետներ եւ Գանատայի եօթը վարպետներ:

Մրցաշարքի առաջնութեան տիրացաւ ճատրակի մեծ վարպետ Եւկանի Պարիվ: Երկրորդ եւ երրորդ հանդիսացան ՖԻՏԷ-ի վարպետ Միշէլ Սոնկ եւ միջազգային վարպետ Քայկի Եանկ: Հայազգի Տէրիք Աղամալեան խլեց 2000 կէտէ վար դասակարգի առաջնութիւնը: Իր ետին երկրորդ եւ երրորդ դիրքերը գրաւեցին Փեփին Մանալօ եւ Ռոպ Ղազարեան: Առանց դասակարգի բաժնիախոյեան հանդիսացաւ Վատիմ Խաչատուրով: Երկրորդ եւ երրորդ

հանդիսացան Արսէն Խաչերեան եւ Նիքոլայ Յովհաննէսեան:

Հարկ է նշել, որ կազմակերպիչ յանձնախումբը ջանք չէր ինսյած, որ մրցաշարքը կատարուի ճատրակի վերջին նորութիւններով, ելեկտրոնային պաստառներով եւ խաղերը ուղղակի համացանցով սփռելով:

Մրցաշարքի կազմակերպիչներէն Արամ Էդիպարեան նշեց, որ մրցաշարքը Հայոց Յեղասպանութեան յիշատակին նուիրելով յարգանքի մեր տուրքը կ'ընծայենք մեր նահատակներուն, ինչ որ մեր մէջ կը գորացնէ հաւատքը աշխատելու, որպէսզի նման արարքներ դարձեալ չպատահին: Տրուած ըլլալով որ Հայաստանը միշտ մեծ յաջողութիւններ արձանագրած է ճատրակի աշխարհին մէջ, եւ այս մրցաշարքը պատեհ առիթն է յիշատակելու մեր նահատակները եւ ցոյց տալու մարդկութեան, որ հայ ժողովուրդը ունի հաւատքն ու ուժը վերապրելու եւ ստեղծագործելու:

Էդիպարեան աւելցուց. «Այս մրցաշարքը մեզի առիթը ստեղծեց խաղալու ճատրակի քանի մը հարիւր խաղեր, յիշատակելու անհաշիւ այն մրցումները, որոնք բնաւ չխաղցուեցան Յեղասպանութեան պատճառով»:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ա**նցնող ամիսներուն, ժողովական կարգով, Շըր-ջանային թէ մասնաճիւղային նոր վարչութիւններով օժտուեցան հետեւեալ շրջանները.-

## Հ.Մ.Ը.Մ. ԱԻՍՏՐԱԼԻԱ

- Եղբ. Տիրան Վահրատեան- ատենապետ.
- Եղբ. Աբիկ Պետրոսեան- ատենադպիր.
- Եղբ. Տերիք Գարամեան- գանձապահ.
- Եղբայրներ Հրաչ Քէօսէեան եւ Արպի Յարութիւնեան- խորհրդականներ.

## Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ. ԿԻՊՐՈՍ

- Եղբ. Յակոբ Գազանճեան- ատենապետ.
- Եղբ. Հրայր Ղազարեան- ատենադպիր.
- Եղբ. Յարութ Աղազարեան- գանձապահ.
- Եղբ. Վահէ Զատոյեան, քոյր Լենա Պահատուրեան- խորհրդականներ.

## Հ.Մ.Ը.Մ. ՄՈՆԹԷՎԻՏԻՕ


- Եղբ. Արամ Պետրոսեան- ատենապետ.
- Եղբ. Տիէկօ Գուլումճեան- փոխ ատենապետ.
- Քոյր Նիքոլ Պարպարեան- ատենադպիր.
- Եղբ. Անդրանիկ Փանոսեան- գանձապահ.
- Եղբ. Մինրան Գուլումճեան, քոյրեր Գայիանէ Վարժապետեան, Ալեքսիա Պարպարեան, Ռոմինա Գուլումճեան- խորհրդականներ.
- Եղբ. Միքայէլ Նալպանտեան- մասնաճիւղի խմբապետ.


## Հ.Մ.Ը.Մ. ՄՈՍԿՈՒԱ

- Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի վերակազմեալ մասնաճիւղը ունեցաւ նշանակովի վեցամսեայ նոր վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.-
- Եղբ. Սարգիս Սարգսեան- ատենապետ.
- Եղբ. Դրօ Գնտոյեան- ատենադպիր.
- Եղբ. Արման Սահակեան- գանձապահ.
- Եղբայրներ Ռոպէրթ Աբաղեան եւ Արթիւր Աբրահամեան- խորհրդականներ.

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)






# Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**  
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand/Le Monde, Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 PARIS

- Direct Flights  
**PARIS**  
**YEREVAN**  
**PARIS**
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr


32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# 26 ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ԿՐՕՆԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ

Մարո Քեչիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ.Նահանգներու շրջանի սկաուտական բաժանմունքէն աւելի քան 60 արի-արենոյշներ, Շրջանային Վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդին ընկերակցութեամբ, Շաբաթ, 13 Փետրուարին մասնակցեցան Մեծ Պահոց սկիզբը ազգանշող ժամերգութեան եւ Տեառնընդառաջի նախատօնակին:



## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ

Օրուան քարոզը կատարեց Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ օրուան իմաստը հասկնալի ու տպաւորիչ ձեւով բացատրելով յայտնեց, թէ «Տեառնընդառաջի հիմնական

պատգամը մեր հաւաքական ընծայումն է Աստուծոյ, մեր հաւաքական նուիրաբերումն է մեր եկեղեցւոյ, մեր հաւաքական նուիրաբերումն է մեր ազգին... Նաեւ այս տօնը Տիրոջ ընդ առաջ երթալու տօնն է, Տիրոջ հանդիպելու տօնն է եւ Տիրոջ հետ դէմ յանդիման գալու

տօնն է»: Ան մաղթեց, որ Աստուած իր խօսքերով եւ պատուիրաններով լուսաւորէ ներկաները եւ բոլոր հաւատացեալներու հոգիները:

Քարոզին մէջ, Առաջնորդը իր գնահատանքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի ըսկաուտներու ներկայութեան համար, մանաւանդ որ այդ սկաուտներէն 26-ը, իր գլխաւորութեամբ կատարուող Հ.Մ.Ը.Մ.ի «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի կրօնական շքանշանի դասընթացքներուն հետեւելով՝ կը պատրաստուէր ստանալ զայն:

Քարոզէն ետք, Մուշեղ Արք. օրհնեց արդէն իսկ միջազգային ճանաչում ունեցող կրօնական շքանշանները եւ մէկ առ մէկ զանոնք յանձնեց համապատասխան դասընթացքին հետեւած Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն եւ եղբայրներուն՝ յորդորելով իւրաքանչիւրը, որ «այն դաստիարակութիւնը, այն կարգապահութիւնը, զոր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն կը ստանաք, այդ բոլորը յառաջիկայ տարիներուն ձեր ամէնօրեայ կեանքին մէջ իբրեւ դրութիւն, իբրեւ լուսաւորութիւն պիտի ունենաք»:

Այս առիթով, Առաջնորդը գնահատեց եւ օրհնեց Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր պատասխանատուներն ու Շրջանային Վարչութիւնը եւ մաղթեց, որ «2016 տարուան ընթացքին իւրաքանչիւրդ, ձեր ծառայութեամբ դուք ձեզ գերազանցէք, զիրար գերազանցէք, առաւել եւս ծառայէք մեր ազգին, մեր հաւաքական կեանքին, Աստուծոյ եւ մանաւանդ մեր եկեղեցւոյ պայծառութեան»:

## ԽԱՐՈՅԿԻՆ ՇՈՒՐՋ

Ժամերգութենէն ետք, Մուշեղ Արք. Մարտիրոսեանի գլխաւորութեամբ, արարողութեան մասնակից հոգեւորա-



կանները, չըջանի Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուներն ու արի-արենոյշները, ինչպէս նաեւ հաւատացեալ ժողովուրդը ուղղուեցան եկեղեցւոյ բակը եւ մասնակից դարձան աւանդական խարոյկը վառելու արարողութեան: Խարոյկին շուրջ անոնք խմբերգեցին ազգային ու կրօնական երգեր. շատեր ցատկեցին խարոյկին վրայէն, ապա օրհնուած կրակէն իրենց վառած մոմերով վերադարձան տուն՝ լուսաւորուած հոգիներով եւ սիրտերով:

Սակայն, երեկոն չէր աւարտած ներկայ Հ.Մ.Ը.Մ-ականներուն համար, որոնք Առաջնորդ Հօր, հոգեւորականներուն եւ իրենց պատասխանատուներուն հետ յիշատակի խմբանկար մը նկարուելէ ետք՝ առաջնորդուեցան եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահը, ուր Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի գլխաւորութեամբ հիւրասիրուեցան աւանդութիւն դարձած միասնական ընթրիքով, «Սիրոյ սեղան»ի շուրջ:

**ԱԻԱՆԴԱԿԱՆ**

**«ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆ»Ը**

Ընթրիքին մասնակցեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ներկայացուցիչ Վաղինակ Պապայեան, Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեանէն ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, քոյր Մարօ Քէշիշեան, եղբայրներ Արտօ Ղազարեան եւ Պերճ Պետոյեան, Երջա-



նային Սկաուտական Խորհուրդէն ատենապետ եղբ. Մերուժան Կիտցինեան, Երջանային խմբապետուհի քոյր Շարլին Կիւզէլեան, քոյրեր Շողեր Արիսեան, Ռիթա Կիւլէսէրեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու ներկայացուցիչներ, մասնաճիւղերու խմբապետ-խմբապետուհիներ եւ աւելի քան 60 աստիճանաւորներ ու արի-արենոյշներ:

Եզակի այս երեկոյին մասնակիցները ողջունեց եւ հանդիսավարութիւնը կատարեց Վազգէն Քհնյ. Աթմաճեան, որ ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք՝ ներկայացուց ձեռնարկին ներկայ հոգեւոր հայրերը՝ Կոմիտաս Քհնյ. Թո-

րոսեանը, Արտակ Քհնյ. Տէմիրճեանը եւ Նարեկ Ա. Քհնյ. Փեհլիվանեանը: Իսկ Հ.Մ.Ը.Մ-ականներուն ծանօթանալու համար, իւրաքանչիւր սեղանէն հրաւիրեց ներկայացուցիչ մը՝ ներկայացնելու իր սեղանակիցները: Հետաքրքրական եւ քաջալերական էր Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղէն ինը քոյր-եղբայրներու մասնակցութիւնը, որ մեծապէս գնահատուեցաւ մասնակիցներուն կողմէ: Ապա, քահանայ հայրը շնորհակալութիւն յայտնեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան, որ ամէն տարի սիրով կը ստանձնէ այս կարեւոր նախաձեռնութեան հիւրընկալումը: Քահանայ Աթմաճեան, շնորհաւորելով շքանշան ստացող քոյր-եղբայրները մաղթեց, որ անոնք հաւատքով կը ծառայեն իրենց չըջաններու եկեղեցիներուն մէջ:

Երջանային Վարչութեան կողմէ շնորհակալութեան խօսք արտասանեց եւ ձեռնարկին կարեւորութիւնը շեշտեց Երջանային Սկաուտական Խորհուրդի կապ եղբ. Արտաշէս Ղազարեան: Ան հոգեկան իր գոհունակութիւնը յայտնեց սկաուտներուն արձանագրած կրօնական այս կարեւոր քայլին համար, որ անպայման կարեւոր դեր պիտի խաղայ իրենց կեանքին մէջ: Ան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Հօր, որ նման գեղեցիկ ծրագիր մը կը հովանաւորէ եւ բժախնդրութեամբ կը հետեւի անոր ընթացքին: Եղբայրը մաղթեց, որ այս դարնթացքը շարունակուի եւ տարուէ







տարի աւելի մեծ թիւով արի-արենոյշներ ներգրաւէ:

Երեկոյին վերջին բաժինով հայրական իր պատգամը փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ շնորհաւորելով կրօնական շքանշանին արժանացած Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները՝ իր գոհունակութիւնը յայտնեց անոր համար, որ «Սիրոյ սեղան»ին շուրջ սկսած տարիներու այս աւանդութիւնը կը շարունակուի Տեառնընդառաջի տօնին առիթով: Ան խրախուսեց սկառուտները, որ ըլլան իրենց պարտականութեան գիտակից, իրենց կեանքին մէջ գիտնան նուիրաբերել, մտերմանան Աստուծոյ եւ իր պատուիրաններուն

հետ, որպէսզի Աստուծոյ տիպար զաւակները դառնան: Եզրակացնելով, Առաջնորդը ըսաւ. «Եթէ մենք Աստուծոյ տիպար զաւակներ ենք, նաեւ հայ ժողովուրդի զաւակներ ենք, հայ քրիստոնեայ զաւակներ ենք: Իսկ երբ մենք Աստուծոյ լոյսը մեր մէջ ունենանք՝ միտքի լոյս, հոգիի լոյս, սրտի լոյս, մեզմէ կը ճառագայթէ պայքար»:

ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ

Խորհրդաւոր եւ իմաստալից «Սիրոյ սեղան»ի ընթրիքը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով: Առաջնորդ հայրը իւրաքանչիւր

շքանշան ստացողին նուիրեց իւրայատուկ նուէր մը, իսկ մնացեալ մասնակիցներուն՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սրբապատկերն ու մեծ էջի վրայ գեղեցկօրէն պատկերուած Տէրունական աղօթքը: Ան չմոռցաւ նաեւ Շրջանային Վարչութեան եւ Սկառուտական Խորհուրդի անդամները, որոնցմէ իւրաքանչիւրին նուիրեց Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ապակեայ խորհրդանշանը:

Երեկոյի աւարտին, մասնակից արի-արենոյշները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ Տեառնընդառաջի լոյսով լուսաւորուած հոգիներով:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԼԷՆՏԷՅԼԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ԿԵԴՐՈՆԸ ԿՈՉՈՒԵՑԱԲ ՎԱՀԷ ԱՐԾՐՈՒՆԻԻ ԱՆՈՒՆՈՎ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ —

**Վ**երջերս, Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի հիւսիսային կեդրոնը անուանակոչուեցաւ ազգային նրւիրեալ գործիչ Վահէ Արծրունիի անու-

նով: Անուանակոչութիւնը կատարուեցաւ ներկայութեամբ թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, հոգեւորական դասի, Կլէնտէյլի քաղաքապետ Արա Նաճարեանի, քաղաքային խորհուրդի անդամներ Փաուլա Տիվայնի, Զարեհ Սինանեանի եւ Վարդան Կարապետեանի:

Վահէ Արծրունին, աւագանի անունով՝ Մելիքսէթ Մուրատեան, ծնած է 1884-ին, Վանի Շատախ գաւառի Կաղբի

գիւղը, մելիքական ընտանեկան յարկի տակ: 1896-ին, Համիտեան ջարդերու հետեւանքով ան կը կորսցնէ հայրը եւ ընտանիքով կը գաղթէ Վան:

Աղէտեալներուն օգնութեան կը հասնի Վանի միսիոնար դոկտոր Ռէյնոլդզը: Վերջինը Վանի մէջ կը բանայ որբանոց, ուր 500 որբերու հետ կ'ընդունուի նաեւ Վահէն: Կարճ ժամանակ ետք, իր ուշիմութեան եւ ղեկավարման ձիրքերուն շնորհիւ, ան կը նշանակուի որբերու վերակացու: Վեց տարի կը մնայ որբանոցի մէջ եւ կը սորվի որբանոցի դպրոցին մէջ:

Այդ շրջանին Վանի երիտասարդութիւնը տոգորուած էր յեղափոխական գաղափարներով եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը վայելէր մեծ համակրանք: Յեղափոխական գաղափարները կը թափանցեն նաեւ որբերու մէջ, եւ Վահէն իր հասակակիցներուն հետ կը մտնէ Հ.Յ.Դ.ի շարքերը:

1903-ին, Վահէն փայլուն վկայականով կ'աւարտէ ամերիկեան դպրոցը եւ իր ուսուցիչներուն քաջալերանքով կ'որոշէ անցնիլ Մ. Նահանգներ, ուսումը շարունակելու համար: 1906-ին Վա-



հէն կը հասնի Մ. Նահանգներ, կ'ընդունուի Հարվորտ համալսարանը եւ 1913-ին կ'աւարտէ միջազգային օրէնքի եւ իրաւագիտութեան բաժանմունքը, մագիստրոսի տիտղոսով:

1919-ին, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը գայն կը հրահրէ Փարիզ՝ միանալու Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան: Ան կը գործակցի Ա. Ահարոնեանի, Համօ Օհանջանեանի եւ Արմէն Գարոյի հետ: Ապա, Հայաստանի կառավարութիւնը գայն կը հրահրէ Հայաստան, իբրեւ ներգաղթի աշխատանքներու վարիչ, գաղթականներու հարցերով աշխատելու համար Մ. Նահանգներու եւ Անգլիոյ հետ:

1920-ի Ապրիլին կ'անցնի Կարս՝ դասաւորելու համար ներգաղթի գործերը: Կարսի մէջ, Ամերիկայի Նպաստամատոյց Կոմիտէին օժանդակութեամբ, Վահէն կը բանայ որբանոց եւ կը կազմակերպէ անոր կրթական եւ առողջապահական գործը, կը կանոնաւորէ ապրուստի պայմանները, սակայն իր ազնիւ գործը կը մնայ անաւարտ: Թուրքերը կը գրաւեն Կարսը, իսկ ան կը մնայ Կարս եւ յամառօրէն կը պաշտպանէ որբերը: Թշնամիին լրտեսական բաժինը կը փնտռէ Վահէ Արծրունին, սակայն կը կարծէ, թէ նա ամերիկացի է: Այս վի-



ճակը երկար չէր կրնար տեւել: 1921-ի Յունուար 15-ին, Վահէն 15 ընկերներու հետ կը ձգէ Կարսը եւ կը հասնի Խորհրդային Հայաստան, ուր Փետրուարեան ապստամբութեան ընթացքին, Մեղրիի վրայով կ'անցնի Պարսկաստան: Թաւրիզի մէջ կը լծուի որբերու եւ գաղթականներու օգնութեան գործին:

1932-ին կը տեղափոխուի Թեհրան, ուր կը շարունակէ իր հայրենասիրական, կրթական-մշակութային գործունէութիւնը:

Վահէն կ'աշխատակցի Պոսթընի մէջ լոյս տեսնող «Հայրենիք» ամսագիրին,

Գահիրէի «Յուսաբեր»-ին, Փարիզի «Յառաջ»-ին, Թեհրանի «Ալիք» օրաթերթին եւ ամսագիրին:

1958-ի Յունիսի 17-ին Վահէն կը հեռանայ կեանքէն, իր հետ տանելով հայրենիքի կարօտն ու պանդուխտի դառնութիւնները:

Իր աղջիկը՝ Յուլիկ Արծրունին իր եւ Տօրը ամբողջ ունեցուածքը նուիրեց հայ երիտասարդութեան՝ հայրենիքի սիրով եւ հայ ազգին ծառայելու գաղափարով դաստիարակող Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին:

## Հ.Մ.Ը.Մ.Ի «ՍԵՒԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ 31-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ՝ 60 ԽՈՒՄԲԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ

Թղթակից  
ՄԱՐՕ ԲԵՇԻՇԵԱՆ

Արդէն գեղեցիկ սովորութիւն դարձած է Մ. Նահանգներու նախագահներու օրուան նըւիրուած երկար շաբաթավերջը վերապահել Հ.Մ.Ը.Մ-ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին, որ այդ ընթացքին կը կազմակերպէ տարեկան իր մարզական մեծագոյն նախաձեռնութիւնը՝ միջ-մասնաճիւղային մարզախաղերը:





31-րդ տարին ըլլալով, մարզախաղերը այս տարի մեծ խանդավառութիւն ստեղծեցին մասնակից խումբերուն եւ առաւելաբար շրջանի փոքրաթիւ հայկական գաղութի անդամներուն մէջ, որոնք անհամբերութեամբ կը սպասեն անոնց կայացման: Եզակի այս մարզախաղերը մտերմութիւն կը ստեղծեն մասնաճիւղերու մարզիկ-մարզկուհիներուն, անոնց մարզիչներուն, ծնողներուն եւ շրջանի հայութեան միջեւ՝ անոնց մէջ ամրապնդելով Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ սէրը, յարգանքն ու հաւատքը:

Ոգեւորիչ այս մարզախաղերուն այս տարի մասնակցեցան պասքէթպոլի, վոլիպոլի եւ ֆութպոլի բարձր դասակարգի 60 խումբեր, որոնցմէ 49-ն՝ պասքէթպոլի, 6-ը՝ վոլիպոլի, իսկ 5-ը ֆութպոլի երկսեռ խումբեր էին, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի հետեւեալ 12 մասնաճիւղերէն:

- Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղ՝ 3 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ՝ 4 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Յրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ՝ 5 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթեպելլոյի մասնաճիւղ՝ 1 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ՝ 10 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյի «Արարատ» մասնաճիւղ՝ 19 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Օրէնճ Քաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղ՝ 2 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտո Հո-

վիտի «Մասիս» մասնաճիւղ՝ 7 խումբ:

- Հ.Մ.Ը.Մ-ի Ինլընտ Էմփայլըրի «Արագ» մասնաճիւղ՝ 1 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ՝ 1 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ՝ 6 խումբ:
- Հ.Մ.Ը.Մ-ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ՝ 1 խումբ:

Մրցումները սկիզբ առին Շաբաթ, 13 Փետրուար 2016-ի առաւօտեան ժամը 8-ին: Պասքէթպոլի եւ վոլիպոլի մրցումները կատարուեցան Սան Տիէկոյի «Էլի-ընթ Ինթըրնէշնըլ» համալսարանի վեց մարզադաշտերուն, իսկ ֆութպոլի մրցումները՝ «4 Էս Ընչ սփորթ փարք»-ի մարզադաշտերուն վրայ:

Եւօրեայ այս մրցումներուն կազմակերպչական աշխատանքներուն մեծապէս նպաստեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային մարզական խորհուրդը, որ Շրջանային Վարչութեան մարզական ներկայացուցիչ եղբ. Արամ Թոմասի ընկերակցու-



թեամբ՝ երեք օր մօտէն հետեւեցաւ մրցումներուն եւ հսկեց անոնց հեղասահ ընթացքին: Մարզադաշտեր այցելեցին եւ մրցող խումբերը քաջալերեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Շրջանային Վարչութեան անդամներ՝ ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, եղբայրներ Փիէր Մանուկեան եւ Պերճ Պետոյեան:

Շաբաթ, 13 եւ Կիրակի, 14 Փետրուարին կատարուած գտումի հետաքրքրական մրցումներէն ետք, ճակատագրական եղան Երկուշաբթի, 15 Փետրուարի աւարտական մրցումները՝ երեք մարզաճիւղերու մասնակիցներուն համար: Ախոյեանութեան թեկնածու իւրաքանչիւր խումբ իր լաւագոյն խաղարկութեամբ փորձեց տիրանալ առաջնութեան բաժակին: Պէտք է ընդգծել, թէ մրցող խումբերը ընդհանրապէս հաւասար խաղարկութիւն ցուցաբերեցին, ինչ որ մեծապէս գնահատուեցաւ ներկայ մարզասէր հասարակութեան կողմէ:

Աւարտական իւրաքանչիւր մրցումէ ետք, յաղթող խումբին յանձնուեցաւ իր դասակարգի ախոյեանութեան բաժակը՝ երկարաշունչ ծափող ջոյններով: Գեղեցիկ երեւոյթ էր մրցումներէն ետք տեսնել պարտուող եւ յաղթող խումբերու ողջագուրումները, որոնք Հ.Մ.Ը.Մ-ականի իսկական մարզական ոգին կ'արտացոլէին: Մրցումները աւարտեցան Երկուշաբթի կէսօրէ ետք ժամը 3-ին: Մրցող

խումբերը, մարզական պատասխանատուներն ու քաջախերոզ ծնողները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ գեղեցիկ յիշատակներ դրոշմելով իրենց յիշողութեան մէջ:

«Այս տարի աւելի ոգեւորութեամբ ընթացան «Սեւան» մասնաճիւղին կազմակերպած միջ-մասնաճիւղային մարզախաղերը, որոնք հարստացած էին նաեւ վոլիպոլի մրցումներով: Շրջանային վարչութիւնը, մարզական խորհուրդին միջոցով եւ մասնաճիւղերուն ջանքերով, մեծ ճիգ կը թափէ, որպէսզի նման մարզախաղեր միայն պասքեթպոլով չսահմանափակուին: Այս մարզախաղերը նաեւ առիթ կը հանդիսանան մասնակից խումբերուն իրենց ուժերը չափելու եւ լաւագոյն ձեւով պատրաստուելու

Նաւասարդեան 41-րդ մարզախաղերուն», ուրախութեամբ ընդգծեց Շրջանային վարչութեան մարզական ներկայացուցիչ եղբ. Արամ Թումաս:

Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղը այս մարզախաղերուն կազմակերպումով ո՛չ միայն մեծ ոգեւորութիւն ստեղծեց Սան Տիէկոյի հայկական փոքրաթիւ գաղութին մէջ, այլեւ փաստեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ականի ոգին կը տիրապետէ շրջանէն ներս, եւ թէ ինք, հակառակ փոքր մասնաճիւղ մը ըլլալուն, կարողութիւնը ունի հարիւրաւոր մարզիկ-մարզկուհիներ համախմբելու եւ զանոնք Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով ոգեւորելու:



## 31-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂ ԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

### ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

#### Ա. ԴԱՍԱԿԱՐԳ-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Սասուն» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (3) եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (4) մասնաճիւղ

#### Բ. ԴԱՍԱԿԱՐԳ-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Սասուն» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի եւ Լոս Անձելըսի մասնաճիւղեր

#### 21 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԱՐ ԴԱՍԱԿԱՐԳ-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (3) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (1) եւ «Արարատ» (2) մասնաճիւղ

#### 18-16 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԱՐ ԴԱՍԱԿԱՐԳ-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (2) եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (3) մասնաճիւղ

#### Դ. ԴԱՍԱԿԱՐԳ (16 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԱՐ)-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» (1) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» (1) եւ «Մասիս» (2) մասնաճիւղ

#### Ա. ԴԱՍԱԿԱՐԳ-ԱՂՋԻԿՆԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» (1) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» (2) մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» եւ «Մասիս» մասնաճիւղեր

### ՎՈՒԹՊՈՒԼ-ԱՂՋԻԿՆԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (2) մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (3) եւ «Ազատամարտ» (2) մասնաճիւղեր

### ՖՈՒԹՊՈՒԼ-ՄԱՆՉԵՐ

1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի «Սարդարապատ» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի եւ «Շանթ» մասնաճիւղեր



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Մարո Քեչիշեան  
LNU ԱՆԾԵԼԸՍ

**Կ**իրակի, 31 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.ի «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան դաստիարակչական յանձնախումբին միօրեայ սեմինարը, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ական 110 պատասխանատուներ, որոնք կը ներկայացնէին մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային եւ մասնաճիւղերու յանձնախումբերը եւ արիւարենոյշ խմբապետ-խմբապետուհիները:

Մասնակիցներու արձանագրութիւններէն ետք, սեմինարը սկսաւ առաւօտեան ժամը 9:45-ին, կազմակերպիչ յանձնախումբին բարի գալուստի խօսքով:

Սեմինարին առաջին նիւթը կը վերաբերէր սուրիահայութեան օժանդակութեան հիմնադրամին կազմակերպած թելեթոնին, որուն մասին լայն բացատրութիւններ տուաւ կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն Վազգէն Մատէնյեան: Ան մանրամասն խօսելով

թելեթոնի նպատակին եւ կարեւորութեան մասին՝ անդրադարձաւ սուրիահայութեան դիմագրաւած ընկերային, տնտեսական եւ ապահովական դժուարութիւններուն մասին՝ կոչ ուղղելով ներկաներուն, որ իբրեւ ազգային պարտականութիւն, օգնութեան ձեռք երկարեն մեր հայրենակիցներուն՝ մասնակցելով թելեթոնին:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի հաշիւներու վերահսկիչ Սիրուն Տէրտէրեան անդրադարձաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի եւ յատկապէս մասնաճիւղերու հաշիւներու պահպանման ընթացքին՝ մանրամասնօրէն բացատրելով Internal Revenue Service-ին (IRS) տարեվերջին ներկայացուելիք հաշիւները, երկրի արդարադատութեան բաժինին կողմէ պահանջուող հաշուեքննութեան ճշգրիտ ներկայացման ձեւերը, մասնաճիւղերու հաշիւներու պահպանման միաձեւութիւնը եւ զանոնք արձանագրելու պահանջը:

Սեմինարին գլխաւոր նիւթերէն էր «Համայնքի ղեկավարը» դասախօսութիւնը, զոր ներկայացուց շրջանի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ, իրաւաբան Նորա Յովսէփեան: Ան լայնօրէն բացատրելով ղեկավարութեան իմաստն ու նպատակները՝ յիշեցուց

ամերիկացի նշանաւոր գրող Թոմ Փիթրիի՝ ղեկավարի սահմանումը, որ կ'ըսէ. «Ղեկավարները հետեւորդներ չեն ստեղծեր, այլ՝ շատ աւելի ղեկավարներ»:

Յաջող ղեկավարի մը յատկութիւններուն վրայ կեդրոնանալով, Նորա Յովսէփեան համապատասխան օրինակներով եւ իրողութիւններով ընդգրծեց անոր պատուախնդիր, համարձակ, յանձնառու, արդարադատ, ստեղծագործ եւ ճկուն ըլլալու հրամայականը:

Սեմինարին մասնակիցները, առիթը օգտագործելով՝ հետաքրքրական հարցումներ ուղղեցին եւ սպառիչ պատասխաններ ստացան Հայ Դատի աշխատանքներու, Մ. Նահանգներու պետական անձնաւորութիւններու Հայաստան-Արցախ կատարած այցելութիւններուն, ինչպէս նաեւ՝ Արեւմտահայաստանի աջակցութեան շուրջ դասախօսին պատրաստած վաւերագրական ժապաւէնին մասին:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ապագայ ծրագիրները ներկայացուց ատենապետ եղբ. Մանուէլ Մարտիկեան: Ան անդրադարձաւ շրջանային մարզական, սկստական, դաստիարակչական, բանակավայրի, շեփորա-

խումբի եւ Նաւասարդեան մարգախաղերու ծրագիրներուն, ինչպէս նաեւ ուրախութեամբ յայտարարեց, թէ Շրջանային Վարչութիւնը սկսած է արդէն իր երիտասարդական բաժանմունքի ստեղծման աշխատանքներուն, որոնք քաջալերական ընթացքի մէջ են:



Ճաշի դադարէն ետք, «Ընկերային մամուլ» շահեկան նիւթին մասին դասախօսեց «Ազատամարտ» մասնաճիւղի անդամ եւ Լոս Անճելըս գաւառի խաղաղութեան պաշտպանութեան բաժանմունքի պաշտօնեայ եղբ. Սարօ Շիրինեան: Ան



տպաւորիչ օրինակներով ներկայացուց ընկերային մամուլին կարեւորութիւնը, բացատրութիւններ տուաւ զայն օգտագործելու եւ առաւելագոյն չափով անոր միջոցներէն օգտուելու ձեւերուն մասին, որոնք կը նպաստեն միութեան մը հետապնդած նպատակներուն քարոզչութեան:

«Յաջորդական ծրագրաւորում» կարեւոր նիւթը ներկայացուց Հ.Յ.Դ. կեդրոնական Կոմիտէի անդամ Տարօն Տէր Խաչատուրեան: Դասախօսը կարեւոր

նկատելով յաջորդական ծրագրաւորման կարեւորութիւնը միութենական կեանքէն ներս՝ բացատրեց անոր իմաստը, նպատակն ու ապագայ ծրագիրները գործնականացնելու միջոցները: Ան յատկապէս անհրաժեշտ գտաւ նոր մօտեցումներ որոնելու եւ կառավարման նոր ձեւերու որդեգրումը: Տէր Խաչատուրեան շեշտեց մանաւանդ ապագայ ծրագիրի մը կարիքները, զայն իրականացնողներու կարողականութիւնը, անոնց հսկողութիւնն ու արժեւորումը, ինչպէս նաեւ՝ անոր գործադրութիւնը:

«Առաջնորդելու քաջութիւնը» օրւան վերջին նիւթն էր, զոր ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի ախոյեան, Մէյֆլաուր նախակրթարանի տնօրէն Ղոկտ. Թամար Գաթարոյեան: Յաջող ղեկավարման համար անհրաժեշտ յատկութիւնները ներկայացնելով, Գաթարոյեան ընդգծեց անոնց կարեւորութիւնը, իսկ անոնց արդիւնաւէտութեան գծով շեշտեց անհրաժեշտութիւնը ղեկավարելու քաջութեան, համագործակցութեան, հաղորդակցութեան, պատկանելիութեան եւ փոփոխութիւններուն նախաձեռնութեան: Կարեւոր այս կէտերը աւելի շեշտելու համար, ան հաճե-

լի խաղերով ներկաները մասնակից դարձուց նիւթին, ինչ որ մեծապէս նպաստեց հարկն ու պատշաճը փոխանցելու անոնց:

Բոլոր դասախօսները իրենց նիւթերը համապատասխան նկարներով ներկայացուցին նաեւ պաստառի վրայ՝ աւելի տպաւորելով մասնակիցները: Նիւթերու ներկայացումէն ետք, ներկաներուն հարցում-պատասխանի առիթ տրուեցաւ: Նոյն միջոցին, տրուեցան միութենական կեանքին առնչուող հարցումներ, որոնք սպառիչ կերպով պատասխանուեցան դասախօսներուն կողմէ: Նաեւ, իւրաքանչիւր դասախօսութեան աւարտին, Շրջանային Վարչութիւնը, առ ի երախտագիտութիւն, դասախօսին նուիրեց Հ.Մ.Ը.Մ-ի 70-ամեակին առիթով Պարգեւ Շիրինեանի՝ Հրազդանի հրատարակած Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան հատորը:

Սեմինարը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 3:30-ին: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ ղեկավարի մը պատասխանատուութիւնները ըմբռնած ըլլալու համոզումով:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ 19-ՐԴ ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍԸ...

## Թղթակից ԱԼՄԵԼՈ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի սկաուտական եւ մարզական 19-րդ մարզահանդէսը այս տարի ունեցաւ համահունկ տեսակէտներով եւ յաջողեցաւ համախմբել Հ.Մ.Ը.Մ.ի Հոլանտայի երեք մասնաճիւղերէն, «Անի» միութենէն, «Երեւան» հաստատութենէն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Գերմանիոյ Միւնխիսի մասնաճիւղէն 232 մարզիկներ եւ սկաուտներ:

Մարզահանդէսին ներկայ գտնուեցան Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեան, Խաչատուր Ա. Քհնյ. Յրանքեան, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի ներկայացուցիչը, Հայ Դատի Յանձնախումբի, Ա.Խ.Մ.Ա.ի, Հ.Բ.Ը.Մ.ի «Նոր Կեանք» միութեան ներկայացուցիչները եւ աւելի քան 200 ներկաներ:

Բացումը տեղի ունեցաւ զրօշակի

արարողութեամբ, որմէ ետք ողջոյնի խօսքով հանդէս եկաւ եղբ. Սարգիս Տէր Ղազարեան՝ ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն ու զաղափարախօսութիւնը:

Այնուհետեւ, Մաշտոց Քհնյ. Պաղտասարեան ներկաներուն փոխանցեց իր օրհնութիւնը:

Այս առիթով տեղի ունեցաւ տողանցք եւ սկաուտական խոստման ու երդման արարողութիւն: Կատարուեցաւ նաեւ աստիճաններու եւ պաշտօններու բաշխում:

Յայտագիրը շարունակուեցաւ բուրգերու կազմութեամբ եւ սկաուտական



յայտագիրով: Միաժամանակ, տեղի ունեցան մարզախաղերը՝ սրահի Ֆուլթպոլ, վոլիպոլ եւ պասքեթպոլ:

Երեկոյի աւարտին, յաղթանակը կր պատկանէր հոլանտահայ զաղութին: Մարզական մետալները պարգատչեց կր մնային միջոց՝ բուն նպատակին հասնելու համար: Ներկաները լաւ յիշատակներով եւ տպաւորութեամբ բաժնուեցան իրարմէ, կրկին հանդիպելու խոստումով:

Մարզահանդէսին մասնակցութեան պատկերը պարզեց հետեւեալը-

- Հ.Մ.Ը.Մ. Ալքմար- 12 մարզիկ.
- Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ- 20 սկաուտ, 19 մարզիկ.
- Հ.Մ.Ը.Մ. Ալմելո- 87 սկաուտ, 50 մարզիկ.
- Հ.Մ.Ը.Մ. Միւնխիս- 19 սկաուտ, 12 մարզիկ.
- «Երեւան» հաստատութիւն- 7 մարզիկ.
- «Անի» միութիւն- 6 մարզիկ.

# ...«ՀԱՅ ՍԿԱՈՒՏ»Ի ԵՒ «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ»Ի ՕՐԵՐԸ

Թղթակից  
ԱԼՄԵԼՕ

**Հ**ՄԼՄ-ի Ալմելոյի շրջանի սկաուտական կազմը երկօրեայ յայտագիրով մը նշեց «Հայ սկաուտ»ի եւ «Մայրենի լեզու»ի օրերը, Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ:

Արդարեւ, Շաբաթ, 20 Փետրուար 2016-ին, «Հայ սկաուտ»ի օրուան առընթեր նշուեցաւ մասնաճիւղին հիմնադրութեան 20-ամեակը: Այդ օր սկաուտներ առաջին հերթին կատարեցին եկեղեցւոյ մաքրութիւնը, հետեւելով դաւանանքի «Սկաուտը միշտ կ'օգնէ ուրիշին» յօդուածին: Այնուհետեւ, խմբապետ եղբ. Սեւան Կորկիսեան ներկայացուց մասնաճիւղի 20 տարուան ամփոփ պատմութիւնը, որմէ ետք ընթացք առին սկաուտական կարգերու դասընթացքները:

Երեկոյեան, դասընթացքին մասնակից սկաուտները ստացան Արսէն Վրդ. Շահինեանի օրհնութիւնը, գրուեցին անոնք հետ եւ գիշերեցին եկեղեցւոյ սրահը:

Պահակութիւնը եւս մաս կը կազմէր օրուան յայտագրին:

Կիրակի, 21 Փետրուարին, յայտագիրը սկսաւ Ս. Պատարագի մասնակցութեամբ: Ապա, նախատեսուածին նման, Ալմելոյի Ս. Մեսրոպ Մաշտոց կիրակնօրեայ դպրոցին հետ տեղի ունեցաւ գեղարուեստական ձեռնարկ մը՝ նըւիրուած գոյգ տօներուն:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Արսէն Վրդ. Շահինեանի աղօթքով եւ Հայաստանի ու Հ.Մ.Լ.Մ-ի քայլերգներուն երգեցողութեամբ:

Արտասանութեամբ եւ երգով հանդէս եկան Հ.Մ.Լ.Մ-ի սկաուտներն ու դպրոցի աշակերտները, որոնք մեծա-

պէս խանդավառեցին ներկաները:

Ձեռնարկին խօսք առաւ եղբ. Սեւան Կորկիսեան եւ անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ-ի հիմնական առաքելութեան՝ պատրաստել Ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ:

Ինչպէս սովորութիւն դարձած է արդէն, այս տարի եւս սկաուտները պատրաստած էին Պահքի ոսպով ապուրը, զոր Վրդ. Շահինեանի օրհնութենէն ետք՝ ներկաները ճաշակեցին հաճոյքով:

Երկօրեայ այս ծրագիրին իրագործման իր ներդրումը ունեցաւ մասնաճիւղին սկաուտական օժանդակ յանձնախումբը:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻԲՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՆ

## ՎԵՐԱՈՐԱԿԱԻՈՐՄԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Շաբաթ, 6 եւ Կիրակի, 7 Փետրուար 2016-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուի մասնաճիւղի գայլիկ եւ արծուիկ վեցակապետներու եւ վարիչ վեցակապետներու վերաորակաւորման սեմինարը, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուի մասնաճիւղի ակումբին մէջ:

Սեմինարին մասնակիցները լսեցին շարք մը դասախօսութիւններ մասնաճիւղին նախկին արծուիկ եւ գայլիկ խմբապետներուն կողմէ: Անոնք մտերմիկ ժամանակ մը անցուցին իրենց խմբապետներուն հետ: Խաղացին «Escape The Room», գիշերը այցելեցին «Dunkin Donuts» եւ նոր գիտելիքներով հարստացած՝ պատրաստուեցան շարունակելու սկաուտական իրենց տարեշրջանը:



ղի ունեցաւ մասնաճիւղին տարեկան երկօրեայ ձիւնազնացութիւնը: Մինչ մասնաճիւղին արի-արենոյշ, երէց-պարմանուհիները շարքաշ պայմաններու մէջ կատարեցին իրենց ձիւնի բանակումը, գայլիկները, արծուիկներն ու մոկլիները մեկնեցան Աժալթունի ծանօթ պանդոկներէն մէկը, ուր լողացին, խաղացին, արշաւեցին եւ խանդավառ, ուրախ ժամանակ անցուցին:

Կիրակի օր անոնք միացան «Քանաթ պաքիշ»ի մէջ ձիւնի վրայ բանակողներուն եւ միասնաբար հաճելի ժամեր անցուցին ձիւնի վրայ գանազան խաղեր խաղալով: Անոնք նոյնիսկ մրցեցան իրենց ծնողներուն դէմ: Կէսօրին, մասնաճիւղային դրօշակի արարողութենէ ետք, անոնք վերադարձան պանդոկ եւ ճաշեցին:

Յետմիջօրէին, բոլորը տուն վերադարձան անմոռանալի յիշատակներով:


## ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ


Միաժամանակ, Շաբաթ, 6 Փետրուարին, մասնաճիւղին արծուիկները, գայլիկները եւ մոկլիները տօնեցին Բարեկենդանը, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուի ակումբի եւ Նշան Փալանճեան Ճեմարանի «Վասպուրական» սրահներուն մէջ:

Տարբեր տեսակի խաղերով, մրցումներով եւ ուրախ միջնորդութով աւարտեցաւ Բարեկենդանի յատկացուած հաւաքը, որուն աւարտին անդամները ցուցադրեցին իրենց տեսակաւոր զգեստները:

## ԵՐԿՕՐԵԱՅ ԶԻՒՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Երեք շաբաթ ետք, 27-28 Փետրուարի շաբաթավերջին տե-





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ԱՐԵՆՈՅՇՆԵՐՈՒՄ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ «ԱՐԱՄ ՊԵՋԻՔԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆ

**Կ**իրակի, 21 Փետրուար 2016-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրծ Համուտի մասնաճիւղի արենոյշները այցելեցին «Թուչնոց բոյն»ի Հայոց Յեղասպանութեան որբերու «Արամ Պեգիքեան» թանգարանը, ուր զանազան գիտելիքներ ստացան հայ որբերու պատմութեան մասին:

Ապա, քոյրերը պտրտեցան Ժիպէյի պատմական փողոցներուն եւ շուկաներուն մէջ:



## ԵՂՔ. ՆՈՒՊԱՐ ՌՈՒՄՈՒԼԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԲ ԼԻՔԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ԿՈՂՄԷ

Թղթակից  
ՊԵՅՐՈՒԹ

**Ի**նչպէս ամէն տարի, այս տարի եւս, Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնը կատարեց լիբանանեան, արաբական եւ միջազգային սկաուտական կեանքին մէջ մեծ վաստակ ունեցող վեթերան սկաուտներու պարգևատրում: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ 20 Փետրուարին, ներկայութեամբ Լիբանանի կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Էլիաս Ապու Սապի, որ հովանաւորեց եւ կատարեց պարգևատրեալներուն պատուոյ գիրերու եւ շքանշաններու տուչութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ընտանիքին կողմէ սկաուտական



Ֆետերասիոնի շքանշանին արժանացաւ երկարամեայ իր ծառայութեամբ ծանօթ եղբ. Նուպար Ռումուլեան: Եղբայրը 1970 թուականէն սկսեալ գործած է Հ.Մ.Ը.Մ.Ի ժրտէյտէի մասնաճիւղէն ներս՝ ստանձնելով պատասխանատու զանազան պաշտօններ:

Եղբոր պարգևատրման հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի անդամ եղբ. Վաչէ Նաճարեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ՝ Յակոբ Էքմէքճեան, Միսաք Գաւլաքեան, ինչպէս նաեւ՝ Շրջանային Սկաուտական Խորհուրդէն եւ Շրջանային խմբապետական կազմէն անդամներ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

Տարիներու գեղեցիկ սովորութեան համաձայն, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի սկաուտները 2016-ին եւս տողանցեցին հին տոմարով հայկական Ս. Ծննդեան տօնին՝ 18 Յունուարի առաւօտեան:

Սկաուտները տպաւորիչ շարքերով եւ ոգելորիչ նուագներով Երուսաղէմի Հայոց Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանը առաջնորդեցին Բեթղեհէմի Ս. Ծննդեան տաճար:

Ստորեւ տրուած նկարները ընդհանուր գաղափար մը կու տան այդ օրը ստեղծուած մթնոլորտին եւ խանդավառութեան մասին:



Լիւսանկարները՝ Տիգրան Նալպանտեանի:



# ԴԵՂԵՐՈՒ ՀԱԲԱՔ՝ Ի ՆՊԱՍՏ ՉՔԱԲՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ



**Հ**.Մ.Ը.Մ-ի Աթէնքի եւ Գոքինիոյ Սկաուտական Խորհուրդներու հրապարակած մէկ հաղորդագրութենէն կը տեղեկանանք, թէ անցնող ամիսներուն, Նոյեմբեր 2015-Փետրուար 2016, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Սկաուտական Խորհուրդը եւ խմբապետութիւնը, Աթէնքի եւ Գոքինիոյ տեղական Խորհուրդներու եւ մասնաճիւղերու քոյրերու եւ եղբայրներու գործակցութեամբ, կազմակերպած է դեղերու հաւաք՝ ի նպաստ գաղթականներու եւ չքաւորներու:

Ամիսներու խանդավառ աշխատանքի իբրեւ արդիւնք, հաւաքուած է բաւական մեծ քանակութեամբ դեղորայք, որ յանձնուած է «Աշխարհի բժիշկներ» (Medecins du Monde) կազմակերպութեան Աթէնքի մասնաճիւղին:



Դեղորայքին յանձնումը կատարած են Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ՝ քոյր Ագնէս Թոքաթլեան, եղբայրներ Պետրոս Միքայէլեան եւ Օննիկ Աւագեան: Կազմակերպութեան Աթէնքի գրասենեակի պատասխանատուները՝ տիկիններ Գ. Գարտամիցի եւ Տ. Գուցալի ջերմօրէն ընդունած են Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը եւ անոր ծանօթացուցած են կազմակերպութեան շէնքի զանազան բաժինները՝ պահեստանոցները, բժշկարանները եւ առժամեայ կեցութեան սրահը:

Հաղորդագրութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները շնորհակալութիւն յայտնած են Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի Շրջանային Վարչութեան, որ միշտ զօրավիգ կը կանգնի իրենց աշխատանքներուն:

with the complements of

# Restaurant Al-Mayass

# ԻՆՉՈՒ ԵՒ ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՈՒԵՑԱՒ ԴՐԱՄԸ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԵՅՐՈՒԹ



**Շ**

ատ հին ժամանակ մարդիկ որսորդու-  
թիւն կ'ընէին եւ քարանձաւներու մէջ  
կ'ապրէին: Օր մը տեսան, որ դրացի ցե-  
ղախումբ մը կը գործածէ սուր գործիք  
մը, որ կը դիւրացնէ որսորդութիւնը:

Անոնք իրենց որսերու աւելցած մորթերէն տուին դրա-  
ցի ցեղախումբին, որուն դիմաց ստացան այդ սուր գոր-  
ծիքը: Եւ երկու կողմերն ալ գոհ մնացին: Ասիկա կը կոչ-  
ւի ապրանքափոխանակութիւն: Հնագոյն ժամանակնե-  
րուն մարդիկ շատ աւելորդ իրեր չունէին, որպէսզի փո-  
խանակէին իրարու հետ, իսկ երբ սկսան հող մշակել,  
անասուն պահել, ապրանք փոխանակելու գաղափարը  
աւելի տարածուեցաւ:

Աշխարհի զանազան երկիրներու մէջ գործածուած  
են տարբեր տեսակի դրամներ՝ նայած թէ ինչո՞վ հա-  
րուստ եղած է այդ երկիրը կամ ժողովուրդը: Օրինակ,  
հնդիկները ամէն ինչ փոխանակած են քաքառոյով: Հին  
Հռոմի մէջ, գինուորներուն աղ կու տային իբրեւ աշ-  
խատավարձ, իսկ աղը անհրաժեշտ մթերք էր: Եւրոպա-  
յի մէջ շատ արժէքաւոր էին համեմները: Կէս գաւաթ  
կոճապղպեղի դիմաց կարելի էր... նաև մը ստանալ, իսկ  
հիմա նոյն քանակով կոճապղպեղը կ'արժէ 10 ամերիկ-  
եան տոլար:


Այդ օրերուն դժուարութիւնը սակայն այլ տեղ էր.  
մարդիկ հազին ժամանակ կը  
վատնէին մինչեւ  
որ կը գտնէին  
թէ ո՞վ ունէր  
իրենց անհրա-  
ժեշտ ապրանքը,  
մինչեւ անոր հա-  
մոզէին, որ զայն  
փոխանակէր  
իրենց ապրան-


քին հետ շատ ժամանակ կ'անցնէր, այդ պատճառով յա-  
ճախ գործը չէր յաջողեր, որովհետեւ ենթական չէր հա-  
մաձայներ: Այսպէս, կամաց-կամաց կը հասուննայ գա-  
ղափարը, անհրաժեշտութիւնը այնպիսի բանի մը, որուն  
միջոցով կարելի ըլլայ փոխանակել ամէն ինչ: Կը ստեղծը-  
ւի դրամը:

Մօտաւորապէս 4500 տարի առաջ, Եգիպտոսի եւ աս-  
իական երկիրներու մէջ մարդիկ կը սկսին իրենց ապ-  
րանքները փոխանակել մետաղներու (ոսկիի, արծաթի,  
պղնձի) հետ: Աւելի ուշ, անոնք կը սկսին այդ մետաղնե-  
րուն վրայ պատկերներ դաջել, այդպէսով զանազանե-  
լով թէ ո՞ր երկրի դրամն է կամ ո՞ր արքային կամ փա-  
րաւոնին դրամն է որ կ'օգտագործեն: Այդ դրամները  
դիմացկուն եւ ամուր կ'ըլլան: Անոնցմով առեւտուր  
կատարելը աւելի կը դիւրանայ: Կ'ըսուի, որ թուղթէ  
դրամը շատ հին ժամանակներուն առաջին անգամ Զի-  
նաստանի մէջ պատրաստուած է: Թուղթէ դրամը մե-  
տաղեայ դրամէն ունէր առաւելութիւն մը, որ աւելի թե-  
թեւ էր:

● Գիտէ՞ք, թէ աշխարհի ամէնէն արտասովոր դրամը  
Խաղաղական ովկիանոսի Եակ կղզիին քարէ դրամն է:  
Անիկա տափակ, հսկայ քար մըն է, մէջտեղը յատուկ  
անցքով:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ**  
Հայաստանի մէջ գտնուած ամէնէն հին մետաղեայ





դրամը Բ.Ա. 5-րդ դարէն է: Բ.Ա. 3-րդ դարու վերջիները դրամներ հատած են Մոփքի հայոց թագաւորները: Հայկական բազմաթիւ դրամներ հատուած են յատկապէս Արտաշէսեան թագաւորութեան շրջանին եւ անոնցմէ նմոյշները հասած են մեզի: Տիգրան Մեծի դիմանկարով դրամներ հատուած են Տիգրանակերտի, Արտաշատի եւ Անտիոքի մէջ:

Դրամներ հատուած են նաեւ Կիլիկիոյ մէջ: Կիլիկիոյ ոսկէ դրամները կը կոչուէին դահեկան, արծաթէ դրամները՝ դրամ, թագուորի, իսկ մետաղեայ դրամները՝ քարտէզ, փող:



### ԱՆՍՈՎՈՐ ԴՐԱՄՆԵՐ

Աշխարհի զանազան երկրներու մէջ վերջերս տարածուած է նորոյթ մը: Կառավարութիւններ կը պատրաստեն եւ կը հրապարակեն մէկը միւսէն աւելի զարմանալի, գունաւոր, նկարազարդ յոբելինական դրամներ: Մեծն Բրիտանիոյ էլիզապէթ թագուհին դիմանկարը կրող հսկայ մետաղեայ դրամը կը կշռէ հարիւր քիլոկրամ: Ան կ'արժէ... մէկ միլիոն տոլար:




### ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:  
Այս աշխարհի  
չորս ծագերուն,  
Որո՞ւն հարցը-  
նես՝ կը ճանչնայ,  
Անուանի է, մարդ չէ սակայն,  
Ամենագոր է՝ Աստուած չէ:  
(Նախորդ թիւի հանելուկին  
պատասխանն էր անտառ):

## ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

**Ա**սեղնագործութիւնը արւեստի այն տեսակն է, երբ ասեղի (երբեմն հլունի) կամ ասեղնագործ մեքենայի օգնութեամբ, բազմաթիւ թելերով ու բազմապիսի կարերով մարդիկ պատկերներ կը ստեղծեն զանազան գործըլածքներու, կաշիի եւ թաղիքի վրայ: Ասեղնագործելու ժամանակ կը գործածեն նաեւ ուլունքներ, մարգարիտներ, թանկագին քարեր, ոսկեթելեր, արծաթեայ թելեր եւ այլն:



Դարերու ընթացքին ստեղծուած եւ մշակուած են ասեղնանկարներու տեսակներ: Ասեղնագործութիւնը կու գայ շատ հին ժամանակներէն: Հայաստան նշանաւոր եղած է ասեղնագործութեան արուեստով: Մինչեւ այսօր, հայուհիներ ասեղնագործ իրերով կը զարդարեն իրենց տունները: Անոնք կ'ասեղնագործեն հագուստներ, սփռոցներ, վարագոյրներ, ծածկոցներ եւ անմիջական գործածութեան այլեւայլ իրեր: Նշանաւոր են Մարաշի, Այնթապի, Ուրֆայի, Սվազի եւ պատմական Հայաստանի զանազան շրջաններու ասեղնագործութիւնները:



## Տարբեր Յայտացրով



## ՍՈՒՏՈՔՈՒ

	7				2		9
	1	4	5		8		
9		8		7		1	
	3		1	4			
5		9			1		4
			9		3		2
	5			6	4		8
	8		2		9		5
4		1					7

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

2	8	5	1	6	3	7	9	4
4	7	9	8	5	2	6	3	1
3	6	1	9	7	4	2	5	8
8	3	2	4	9	6	5	1	7
9	4	6	7	1	5	3	8	2
1	5	7	2	3	8	9	4	6
5	2	3	6	4	1	8	7	9
7	1	8	5	2	9	4	6	3
6	9	4	3	8	7	1	2	5


Պատասխանը՝ յաջորդիւ

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Էն.Պի.Էյ.»ի կազմերէն:
- Քաջահաւ - Գիշերելու տեղ:
- Անհրաւէր - Ձեւ, կերպ:
- Համադասական շաղկապ - Ձիու մազ:
- Սարսափ - Ամերիկացի նախկին թենիսմէն:
- Հայաստանի հնավայրերէն - Նուազ:
- Իգական օտար անուն - Ողբա՛ - Հոլովակերտ մասնիկ - Այբուբենէն:
- Յովսէփ Էմինի ծննդավայրը - Փարախ:
- Մանկապարտէզի առաջին կարգ - Սխալ:
- Հին վէրք - Հռոմէական դիցուհի:
- Դե՛հ - Քալելով ընթացող - Անպէտ:
- Ռուսիոյ արտաքին գործող նախարարը:
- Շին Ֆէյնի զինուորական նախկին թեւը - Միաւոր թիւ - Եղեգնացուպ:
- Հայ բիւզանդագէտ՝ Տէր Ներսէսեան (1896-1989):
- Մեծ մայր - Գաբրիէլ Սունդուկեանի թատրերգութիւններէն (երեք բառ):
- Տարի - Խռովութիւն - Հայկական ամիսներու 16-րդ օրը:
- Սերունդ - Թաքուն պայթուցիկ:
- Ողիմպիական «դեղին» ցամաքամասը - Լիբանանի գետերէն - Կրակ:
- Չայնանիշ - Ակնկալութիւն - Պաղի:
- Սամպոյի 2013-ի աշխարհի ախոյեան արցախցի մարզիկը:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Ընչաքաղց - Բարձր ծառատեսակ - Բազկերակ:
- Պարբերութիւն - Մէջի կողմ - Սպասուած փրկիչ:
- Ժողովրդային - Գլուխը կախ՝ պարոն - Տարիք:
- Մերոպ Մաշտոցի թաղման վայրը - Մեղմ ալիք - Չուարթ - Հաստատական պատասխան:
- Աստուած - Գումարուած ժողով - Ֆուլթոթ - Ածականակերտ մասնիկ:
- Շան ձագ - Իշխանական աթոռ - Չայնակից գիրեր - Յուցական ածական:
- Հայաստանի գետերէն - «Ֆորմիւլա 1»-ի պրագիլցի մրցավարորդ:
- Փոխադրել - Արական օտար անուն:
- Չայնանիշ - Այբուբենէն - Տառի մը անունը - Գրարար՝ հասկցի՛ր - Արգելական:
- Թատրոնի խցիկ - Յովսէփի առջինները:
- Չմերուկ - Գոմ - Ֆրանսական գետ - Ջրալի ցեխ:
- Իգական օտար անուն - Հայ անգուգական աշուղ - Թթու հոյզով պտուղ:
- Բալախոտ, այծատերեւ - Արաբական մայրաքաղաք - Գառնսիրուք:
- Իրաքեան լրատու գործակալութիւն - Իւրացուց - Եպիսկոպոսական գաւազան:
- Ամուրի կղերական - Որոշուած գին:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ԹԻՒ 220 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Ս	Ա	Պ	Ի	Ն	Լ	Ի	Ս	Ի	Ք	Ի				
2	Ե	Ղ	Ա	Ն	Ա	Կ		Ա	Ր	Ա	Ր	Ա			
3	Ն	Ի	Ս	Տ		Տ	Օ	Ն	Ա	Ծ	Ա	Ո			
4	Ե		Տ	Ի	Կ	Ի	Ն	Գ		Ն	Ա				
5	Ա	Լ	Ա	Ր	Ի	Ք		Գ	Է	Ս		Թ	Ա	Ն	Կ
6	Կ	Ե	Ո	Ա	Ս		Է	Ն	Տ	Ի	Ո	Ն	Տ	Ի	Ք
7		Ի		Կ			Դ		Յ	Ո	Ի		Գ	Ի	
8	Պ	Ո	Ո	Ա				Ա	Ս	Ո	Ի	Ր	Ի		Լ
9	Ա	Ն	Ի	Ն				Կ	Ի	Ի	Ս				
10	Յ	Ա	Շ	Տ				Ա	Ն		Ա				
11	Ք	Ր	Տ	Ի	Ն	Ք		Ո	Յ		Ա	Ր			
12		Ո			Ս	Ա	Ր	Ա	Ն	Ա	Թ	Ա			
13	Ա	Ն	Ո	Ք		Ս		Ս		Կ	Ա	Չ	Ա		Ա
14	Ա	Ե	Ի	Ա	Ն	Ի	Ա	Փ	Ի	Ն		Օ	Յ	Ա	Ն
15	Պ	Ա	Ղ		Ո		Կ	Ո	Լ	Ն	Ո	Չ		Ս	Ա
16	Ա	Ն	Ի	Ր	Ա	Ի		Ի	Տ		Պ	Ր	Ա	Կ	
17	Ս					Փ	Ա	Թ	Ր	Ի	Ս	Ի	Ա	Ն	Ն
18	Տ	Ա				Ե	Ի	Ի	Ղ		Լ	Շ	Ա	Կ	
19	Ա	Ս				Ք	Ա	Ն	Ի		Ս	Ի	Ն	Ա	
20	Ն	Օ				Է	Ն		Յ	Ր	Ա	Ս	Ա	Յ	Լ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏՆԵՐԸ  
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՈՒՐ ՀԱՆ  
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՇՈՒՐՁ



Լուսանկարը՝ Մարինե Ա. Եսգուրյանի: